



KOMITAS.CA
COMPLEXE FUNÉRAIRE
(514) 331-0400



PRE-ARRANGEMENT 0% INTEREST
1, 3, 5, 10 YEAR PAYMENT COVERED BY
"ASSURIS" ASSURANT LIFE OF CANADA

Գանատայի խորհրդարանին մէջ
«Խոստում»ին ցուցադրութեան կը
մասնակցին գանատական բոլոր մեծ
կուսակցութիւններէն ծերակուտականներ
եւ խորհրդարանի անդամներ



Կարդալ էջ 4

Օթթաուայի մէջ բացումը
կատարուեցաւ գանատահայ
աշխարհահռչակ լուսանկարիչ
Եուսուֆ Քարշի յուշարձանին



(Լուսանկարը՝ Սամ Կարսիայի)

Կարդալ էջ 7

ԱՅՍ ԹԻՒՈՎ

ՆԵՐՂԻՐ՝ ՀՕՄ-ի լրատու

Թորոս Պապիկեան արժանացաւ
«Յովհան Մանդակունի»
շքանշանին, էջ 5

ՀՕՄ-ի Լաւալի «Ծուշի»
մասնաճիւղի Սեմինարը, էջ 6

Օթթաուայի մէջ բացումը կա-
տարուեցաւ գանատահայ աշ-
խարհահռչակ լուսանկարիչ
Եուսուֆ Քարշի յուշարձանին,
էջ 7

Միջազգային Ճգնաժամային
Խումբը Դարձեալ Հաշտարար
Դատաւորի Քղամիդով, էջ 8

Հայեցի կրթութիւն, Բ.-
Ծրագիր, էջ 9

Երբ Հայկական «Մուղամ»ը
Կը Նուաճէ Թուրքիան, էջ 9

Դարձեալ «Խոստում» Ժա-
պաւնի Մասին, էջ 10

Կիլիկիոյ Կաթողիկոսութեան
Սիսէ Անթիլիաս Փոխարու-
թիւնը, էջ 11

Ընկճուածութիւն-Ընկճախտ-
Depression, էջ 12

HDP-ի փոխ նախագահ Հիսիար Օզսոյ
Մոնթրէալի մէջ յայտարարեց, որ Թուրքիա
կրնայ երկրորդ Սուրիոյ մը վերածուիլ

Կարդալ էջ 4

2017
CR-V
STARTING FROM
\$26,890*



*Conditions apply. Taxes not included. Freight and air taxes not included. Limited time offer applicable on selected models only and subject to change or cancellation without notice. For more information, visit Honda Gabriel.

HONDA
GABRIEL
7000, boulevard Henri-Bourassa E.
Montréal-Nord, QC H1G 6C4
514 327-7777
www.hondagabriel.com
◀ OPEN SATURDAYS ▶
Kevork Asadourian
Vahan Vartanian
Haig Khobasarian

HONDA



ARZ Fine Foods

**You Can Find ARZ Products
At Selected, Loblaws,
Superstore, Fortinos,
Wholesale Club, & Nofrills
Stores**

- Visit arzfinefoods.com for the latest promotions.
- You can also find us on Flipp
- For employment opportunities;
Email your resume to humanresources@arzfinefoods.com

ARMENIAN HERITAGE CRUISE®

JANUARY 20-28, 2018 - 8 NIGHT CRUISE!

• St. Kitts • Antigua • Puerto Rico • Labadee

You must book
with TravelGroup in
order to attend our
private Armenian
parties!



SIBIL

**HAROUT
PAMBOUKJIAN**



AKH'TAMAR DANCE ENSEMBLE



INSIDE CABIN \$1044

PROMENADE INSIDE \$1094

OCEAN VIEW \$1234

DELUXE BALCONY \$1524

SUPERIOR BALCONY \$1574

SUITES available upon request

3rd or 4th adult or child over 11 years old

sharing same cabin \$730

Children 11 years old and younger \$430

ALL RATES* are per person, double occupancy

*Government tax of \$108.36 per person is additional. Prices include all port charges and ACAA Registration fee. Deposit of \$250 per person due upon booking. Cruise is fully refundable until June 1, 2017. Rates and Information subject to change at any time without notice.



Royal Caribbean
INTERNATIONAL

TRAVELGROUP
INTERNATIONAL

For Reservations Contact:

Local 561-447-0750 • Toll Free 1-866-447-0750 Ext 108 or 102

125 SE Mizner Blvd., Suite 14, Boca Raton, FL 33432

AHC@travelgroupint.com

Call Arpi Ashkarian (Canada) (519) 748-2672

ՀԺԲ-ի փոխ նախագահ Հիսիար Օզսոյ Մոնթրէալի մէջ յայտարարեց, որ Թուրքիա կրնայ երկրորդ Սուրիոյ մը վերածուիլ

Յունիս 11-ին, Մոնթրէալի մէջ կազմակերպուած դեկուցական հաւաքի մը ընթացքին Թուրքիոյ Ժողովուրդներու Ժողովրդավար կուսակցութեան փոխ համանախագահ Հիսիար Օզսոյ ներկայացուց Թուրքիոյ ներքաղաքական իրավիճակը եւ խստորէն քննադատեց Էրտողանի վարած բռնատիրական վարքագիծն ու ազգայնապաշտ քաղաքականութիւնը։

Հաւաքը կազմակերպուած էր Գանատայի Հայ Դատի յանձնախումբին եւ Գանատայի Քրտական Դաշնակցութեան կողմէ։ Մոնթրէալի Հայ Դատի յանձնախումբիւ ատենապետ Արփի Պալիօզեան բացումը կատարեց հանդիսութեան եւ ապա խօսքը փոխանցեց Գանատայի Հայ Դատի յանձնախումբի անդամ Արարատ Թորոսեանին։ Անդրադառնալով Թուրքիոյ մէջ տիրող կացութեան Արարատ Թորոսեան լուսաձակի տակ առաւ Անգարայի իշխանութեանց հալածանքներն ու բռնարարքերը քիւրտ քաղաքական դէմքերուն դէմ։ Քեպէզի Քրտական Հիմնարկին կողմէ Խօսք առաւ Ասլիհան Օզթուրք, որ յայտնեց թէ ինչպէս 100 տարի առաջ հայեր ցեղասպանութեան զօհ կ'երթային, այսօր այդ սպանդներն ու ցեղասպանութիւնը կը շարունակուին քիւրտերուն դէմ։

Արփի Պալիօզեան ներկայացուց պրն. Օզսայի հակիրճ կենսագրութիւնը, նշելով որ ան ասպարէզով ընկերաբան է եւ իր տոքթորական վկայականը ստացած է Միացեալ Նահանգներու Թեքսասի համալսարանէն։ 2011-2015 դասաւանդած է Միչիկընի համալսարանին մէջ։ 2015-ի Նոյեմբերին Թուրքիոյ մէջ կայացած ընտրութիւններուն Պինկէօլի չընտնէն խորհրդարանի անդամ ընտրուած է։ Ժողովուրդներու Ժողովրդավար կուսակցութեան Խորհրդարանի արտաքին յարաբերութեանց յանձնաժողովի ատենապետն է ինչպէս նաեւ իր կուսակցութեան փոխ համանախագահ է։

Օզսոյ ընդհանուր գիծերու մէջ ներկայացուց Թուրքիոյ վերջին երկու տարիներու քաղաքական իրավիճակը, յատկապէս ծանրանալով 2016-ի Յուլիսեան յեղաշրջումի ձախող փորձէն ետք երկրին մէջ սկիզբ առած լայնածաւալ հակաքրտական հալածանքներուն։ Ան նշեց, որ ներկայ դրութեամբ, իր կուսակցութեան նախագահն ու քրտական բնակավայրերու 86 քաղաքապետներ բանտարկուած են։ Հակաքրտական իր արշաւանքին համար Էրտողան կ'օգտագործէ բանակն ու ոստիկանութիւնը, որոնք ներկայ դրութեամբ ամբողջութեամբ իր հակակռօն տակ կը գտնուին։

Օզսոյ Թուրքիոյ ազգայնամոլ ղեկավարութեան անցեալի եւ ներկայի վարքագիծը վերլուծեց, յայտնելով, որ այս քաղաքական վարքագիծը հիմնուած է ժխտողականութեան եւ ուրացման վրայ. Այնպէս ինչպէս աւելի քան հարիւր տարիէ ի վեր Անգարա կը ժխտէ Հայոց Ցեղասպանութիւնը, նոյնպէս ալ հարիւր տարիէ ի վեր կ'ուրանայ Թուրքիոյ քիւրտերու գոյութիւնը։ Օզսոյ իր խօսքը եզրափակեց ըսելով, որ այս բեւեռացած կացութիւնը եթէ շարունակուի՝ մեծ են հաւանականութիւնները որ Թուրքիա երկրորդ Սուրիոյ մը վերածուի։ Զեկույցի աւարտին կայացաւ հարց-պատասխանի բաժինը։ Զեկուցական հաւաքէն ետք պրն. Օզսոյ յատուկ հանդիպում ունեցաւ Գանատայի Հայ Դատի յանձնախումբին հետ։



Գանատայի խորհրդարանին մէջ «Խոստում»ին ցուցադրութեան կը մասնակցին գանատական բոլոր մեծ կուսակցութիւններէն ծերակուտականներ եւ խորհրդարանի անդամներ

Երկուշաբթի, 5 Յունիս 2017-ին, Գանատայի խորհրդարանին մէջ յատուկ ցուցադրութիւն մը տեղի ունեցաւ Հայոց ցեղասպանութեան ժամանակաշրջանը ներկայացնող հոլիվուտեան «Խոստումը» տեսաժապաւէնին։

Գանատա-Հայաստան խորհրդարանական բարեկամութեան խմբակին եւ Գանատայի Հայ Դատի յանձնախումբին կազմակերպած յատուկ այս ցուցադրութեան ներկայ գտնուեցան նկատառելի թիւով ծերակուտականներ, խորհրդարանի անդամներ եւ քաղաքական գործիչներ, ինչպէս նաեւ Հայաստանի Հանրապետութեան դեսպան տիար Արմէն Եկանեան։

Գանատայի Հայ Դատի յանձնախումբի անդամ Մանուկ Ալեմեան իր բացման խօսքին մէջ շնորհակալութիւն յայտնեց երեսփոխան Առնըլտ Ջանին եւ Գանատա-Հայաստան խորհրդարանական բարեկամութեան խմբակի անդամներուն՝ գանատահայ համայնքը յուզող հարցերուն հանդէպ իրենց ցուցաբերած աջակցութեան եւ յանձնառութեան համար։

Տեսաժապաւէնի ցուցադրութենէն ետք, անդամները առիթ ունեցան իրենց կարծիքներն ու տպաւորութիւնները յայտնելու տեսաժապաւէնին մասին, որուն առաջին ներկայացումը կատարուեցաւ անցեալ Սեպտեմբերին՝ Թորոնթոյի տեսաժապաւէնի միջազգային փառատօնին ընթացքին։

Գանատա-Հայաստան խորհրդարանական բարեկամութեան խմբակի ատենապետ երեսփոխան Առնըլտ Ջան եւ Գանատայի Հայ Դատի յանձնախումբի փոխատենապետ տոքթ. Վաչէ Շամլեան խօսք առնելով՝ շնորհակալութիւն յայտնեցին ներկաներուն եւ շեշտեցին Հայոց ցեղասպանութեան նման պատմական բռնարարքներու մասին ճշմարտութիւնը բացայայտող տեսաժապաւէններու կարեւորութիւնը։



Այցելեցե՛ք Թորոնթոյի ամեւօրեայ վարժարանի բարեկարգուած կայքէջը՝ / Visit our new website

www.arsarmenianschool.ca



Voyages
HAIG
Travel

Ձեր բոլոր ճամբորդական Կարիքներուն համար հեռաձայնել՝

(514) 284-7676

ՅԱՏՈՒԿ ԳԻՆԵՐ ԴԷՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ...

ԼԱԻՊԳՈՅՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻԻՆ ԵՒ ՅԱՐՄԱՐԱԳՈՅՆ ԳԻՆԵՐ

PERMIS DE QUÉBEC

3438 Rue St-Denis, Montreal, QC H2X 3L3, Fax: 514-284-7677

 HAIG AFARIAN Cell : 514.862-6779 Bur : 514.360.3000 ext 1234 haig.afarian@gmail.com effectuée par MAÎES ARCHITECTES-HYPOTHÉCAIRES  3310 100e Avenue, bureau 350, Laval Québec H7T 0J7 • FAX: 514.313.5718	Groupe Sutton - Performer Inc. 123 Place Frontenac Pointe-Claire, QC H9R 4Z7  ALBERT ARKILANIAN Courtier immobilier résidentiel Residential Real Estate Broker aarkilanian@sutton.com Cell: 514.962.8822 Bur: 514.426.9595 Fax: 514.426.9596	  VÉHICULES D'OCCASION CERTIFIÉS GABRIEL Kevork Asadourian Directeur des ventes - usagé Sales Manager - Pre-Owned kasadourian@gabriel.ca 7000, Henri-Bourassa E., Anjou (OC), H1G 6C4 Tél : 514 327-7777, Cell: 514 318-4115, Téléc. : 514 327-7967 www.nissangabriel.com • www.hondagabriel.com
 École De Conduite AZIG Driving School Tel: 514-336-1110 Moniteur-Instructeur AUTOECOLEAZIG@HOTMAIL.COM 1400, rue Sauvé O, Montréal, QC H4N 1C5, Suite 1438 Centre Adonis II	 Personal & Corporate Tax Returns Financial Statements Bookkeeping Business Plan NATALIE SKAFF, CPA, CGA Comptable Professionnelle Agréée Chartered Professional Accountant nat.skaff@gmail.com Tel (514) 963 3363 2866 Rue De Chamonix Saint-Laurent, Québec H4R 3B7 Services available in Armenian, Arabic, English and French	BRING YOUR OWN WINE  NAZARETH CLASSIC GRILL 550 Curé Labelle, suite 17, Ste-Rose, QC H7L 4V6 Tel: 450.937.4064 Email: resto.nazareth@hotmail.com
SAMUEL TOPALIAN 450 682-1644 AUTO SAMSON  MÉCANIQUE GÉNÉRALE - REMORQUAGE SERVICE DE PNEUS MISE AU POINT 4700 BOUL. SAMSON, CHOMEDEY LAVAL, QC.	  ՀԱՅԿ ԽԱՐՏՈՒՆԻԱՆ Hayk Hartounian Courtier immobilier résidentiel Residential Real Estate Broker C 514.574.6162 B 514.333.3000	 NETTOYEUR MARIE-CLAIRE CUEILLETTE ET LIVRAISON GRATUITE À DOMICILE ET AU BUREAU (MONTREAL ET LAVAL) 2535 de Salaberry, Montréal Tél: 514.334.7830

ՍԱՐԿԱՒԱԳԱԿԱՆ ԶԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Կիրակի, 4 Յունիս 2017-ին, Հոգե-
գալստեան տօնն էր: Ս. Յակոբ Առաջ-
նորդանիստ Մայր Եկեղեցին խուռներամ
լեցուած էր Ս. Պատարագի սկիզբէն: Յետ
Թափօրի շարական՝ «Առաքելոյ աղաւ-
նոյ»ի երգեցողութեան, երբ պատարա-
գիչը եղանակեց «Զի ողորմած»ը, երգ-
ուեցաւ «Ուրախ լեր Ս. Եկեղեցի» շարա-
կանը: Առաջնորդ սրբազանը՝ Գերշ. Տ.
Բաբգէն Արքեպիսկոպոս Թափօրով Ս.
Բեմ բարձրացաւ եւ աջակողմին զետեղ-
ուած դահին բազմեցաւ: Սարկաւագու-
թեան թեկնածուները՝ Կիսասարկաւագ-
ներ Թորոս Պապիկեան, Կարօ Նոխուտ-
եան, Մուրատ Սանոսեան եւ Կորիւն Գո-
յունեան, որոնք ատենին յառաջամասին
ծուռկի եկած էին նախքան «Զի ողոր-
մած»ը, շարականին երգեցողութեան հե-
տեւած սաղմոսացութեան ատեն՝ Ս. Բեմ
բարձրացան, խարտաւիլակութեամբ՝
Արժ. Տ. Հրայր Աւ. Քհնյ. Նիկոլեանի: Կի-
սասարկաւագները Ս. Բեմին ձախ կողմը
կեցան:

Հովիւը դիմելով Առաջնորդ սրբա-
զանին՝ խնդրեց որ ընծայեալները Սար-
կաւագ ձեռնադրէ, որովհետեւ անոնք
արժանաւոր են այդ կոչման, մաքուր
կեանք կ'ապրին եւ խղճամիտ են:

Առաջնորդ սրբազանը ընդունեց
վկայութիւնը, եւ Հօր, Որդիին ու Ս.
Հոգիին անունով Սարկաւագութեան կո-
չեց զանոնք, աղբրսելով երկնաւոր Հօր,
որ Ան իր Ս. Աջը երկարէ եւ օրհնէ զա-
նոնք նոր կոչմամբ, զօրացնէ զանոնք՝

որպէսզի առաքինի կեանք վարեն, ու
միշտ Որդիին գթութեամբ եւ Ս. Հոգիին
ճշմարտութեամբ լեցուին, ու ծառայեն Ս.
Եկեղեցիին, մինչեւ այն օրը՝ երբ աստ-
ուածային Սուրբ Ներկայութեան կանգ-
նելու վախճանական ցնծութիւնը վայե-
լեն:

Ընծայեալները, որոնք Առաջնորդ
սրբազանի գահին առջեւ կիսաբոլոր
կազմած էին՝ արեւմուտք դարձան, եւ
ծնկաչոք շարժելով դէպի Ս. Բեմին կեդ-
րոն-յառաջամասը՝ իրենց ձեռքերը վեր
բարձրացուցին՝ ի նշան չարէն ու աշ-
խարհիկ բարքերէն հրաժարման: Եւ
Առաջնորդ սրբազանը Ս. Բեմին կեդրո-
նը գալով, եւ իր կողքին ու ձայնակից
ուսեանալով Հոգւ. Տ. Վարդան Վրդ.
Թաշճեանը, Արժ. Տ. Հրայր Աւ. Քհնյ.
Նիկոլեանը, եւ Հովիւը, 3 անգամ երգեց
այնքա՛ն ներշնչիչ «Աստուածային եւ
երկնաւոր շնորհ»ը եւ իւրաքանչիւր ան-
գամ յանուն հաւատացեալներուն՝
Դպրաց դասին վկայութիւնը լսեց, թէ
ընծայեալները արժանի են: Ապա դար-
ձաւ ու բազմեցաւ գահին: Ընծայեալնե-
րը դարձեալ կիսաբոլոր կազմեցին
Առաջնորդ սրբազանին առջեւ, որ աղօ-
թեց եւ խնդրանքներ մատուց Աստուծոյ:

Ս. Պատարագը շարունակուեցաւ
մինչեւ «Ողջոյն»ը: Նախքան այդ՝ ըն-
ծայեալները վերստին կիսաբոլոր կազմե-
ցին Առաջնորդ սրբազանի գահին առ-
ջեւ: Սրբազանը հրաւիրեց հաւատացեալ-
ները, որ սուրբ սիրով ընդունին զանոնք



եւ օգնեն ու քաջալերեն անոնց՝ ի փառս
Ամենասուրբ Երրորդութեան: Ապա
անոնց ձախ դաստակէն առաւ ուրարնե-
րը եւ ուսերուն դրաւ, պատուիրելով՝
«Յանուն մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի,
առէք մաքուր եւ սուրբ այս ուրարները
եւ մեղքի բոլոր պատրանքները թօթա-
փեցէ՛ք, որպէսզի Աստուծոյ Ներկայու-
թեան կանգնիք արժանաւորապէս»:
Տուաւ Ս. Աւետարանը եւ պատուիրեց, որ
զայն շարունակեն կարգաւ մեծ երկիւ-
ղով՝ ի լուր ժողովուրդին, եւ ի յիշատակ
ննջեցելոց: Տուաւ Ս. Սկիհը եւ պատուի-
րեց, որ զայն մեծ երկիւղով մատուցեն
պատարագիչին, որովհետեւ անոր մէջ
կ'իջնէ ինքը Աստուած:

Յետ այս պատուէրներուն, ըն-
ծայեալները շարունեցան Ս. Բեմին ձախ
կողմը: Առաջնորդ սրբազանը կանգնե-
ցաւ Ս. Բեմին մէջտեղը եւ բուրվաւոր
առնելով՝ անոնցմէ իւրաքանչիւրին
տուաւ եւ պատուիրեց, որ Ս. Եկեղեցւոյ

մէջ խնկարկելով՝ բուրաւէտեն Տիրոջ
տունը: Ընծայեալները մէկ առ մէկ, ըստ
կարգի առջեւ եկան ու խնկարկեցին Ս.
Սեղանին եւ ժողովուրդին: Այս պաշտօ-
նէն վերջ, անոնք հաւաքուեցան եւ
ծուռկի եկան Առաջնորդ սրբազանին
առջեւ, որ Ս. Խաչին պահպանութիւնը
աղերսող աղօթքը կատարեց: Այն պա-
հուն, Դպրաց դասը երգեց «Ստեփանոս
քաղցրիկ տատրակ»ը: Նախքան իր
պատգամը՝ Առաջնորդ սրբազանը ուրար
տուաւ դպիր Կարէն Նաճարեանին:

Իր պատգամով՝ ան հրաւիրեց ըն-
ծայեալները, որ Ս. Եկեղեցւոյ ծառային
քաջաբար եւ նախանձախնդրութեամբ՝
նման Նախասարկաւագ ու Նախավկայ
Ս. Ստեփանոսի:



Թէ՛ սարկաւագները եւ թէ՛ ուրա-
րակիրը կանոնաւորաբար փորձերու հե-
տեւած էին Արժ. Տ. Հրայր Աւ. Քհնյ. Նի-
կոլեանի հետ՝ անհրաժեշտ գիտելիքներ
իւրացնելով:

Թորոս Պապիկեան արժանացաւ «Յովհան Մանդակունի» շքանշանին

Կիրակի, 4 Յունիս 2017-ին, Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր եկեղեցւոյ մէջ,
Գերաշնորհ Տ. Բաբգէն Արք. Չարեանի ձեռամբ, պրն. Թորոս Պապիկեան արժանացաւ
«Յովհան Մանդակունի» ազգային-եկեղեցական ծառայութեանց շքանշանին:

Սուրբ եւ Անմահ Պատարագի ընթացքին, Արժանեաց Գիրը ընթերցեց Հոգեշնորհ
Տ. Վարդան Վրդ. Թաշճեան: Առաջնորդ Սրբազան Հայրը իր գնահատանքին մէջ
ըսաւ. «Մեզի համար բացառիկ ուրախութիւն է, այսու մեր գնահատանքը յայտնել,
ձեր բազմամեայ անձնուէր ծառայութեան: Հայ եկեղեցին եւ հայ դպրոցը ծաղկուն
մնացած են շնորհիւ ձեզի նման ազգանուէր անձնաւորութիւններու: Մեծապէս կը
գնահատենք ձեր երկարամեայ նուիրումը, յատկապէս՝ Ս. Յակոբ Առաջնորդանիստ
Մայր եկեղեցւոյ Կիրակնօրեայ դպրոցին: Դուք եղաք գիտակից եւ պատասխանատու
տնօրէն Կիրակնօրեայ դպրոցին, ծրագիրներ մշակեցիք, ուսուցիչներ պատրաստեցիք,
սերունդներ դաստիարակեցիք եւ կրօնական գիտելիքներով հարստացուցիք զիրենք:
Մէկ խօսքով, քրիստոնէական դաստիարակութեան առաքելալը դարձաք»:



 Ghadir Meat & Restaurant T. 416-750-7404 T. 416-750-7400 1848 Lawrence Avenue E. Scarborough, ON M1R 2Y4 E-mail: info@ghadirmeatmarket.com	 Gary Chahinian ABR., Broker of Record - Owner RE/MAX DIAMOND Realty Inc. W torontohomes.ca E gary@remaxdiamond.com 416-258-8892	 Noor Fine Food™ <i>Gourmet Mediterranean Cuisine</i> 1 High Meadow Place, Unit 9 Toronto, Ontario M9L 2Z5 Tel 416 745 3111 Fax 416 745 9337
 ANI Restaurant 905.761.6484 1450 Clark Ave. West, Thornhill ON L4J 7R5	 Sutton Group-Admiral Realty Inc., Brokerage 1206 Centre Street, Thornhill, Ontario L4J 3M0 Annie Varbedian Sales Representative Direct: (416) 918-3615 Office: (416) 739-7200 Fax: (416) 739-9367 annievarbed@hotmial.com www.suttongroupadmiral.com	 hearing aid source Andre Ayvazyan HIS B.A.S. andre@HearingAidSource.ca 416 754 4327 (HEAR) Parkway Mall, 85 Ellesmere Rd., #65, Toronto, ON, M1R 4B9
 Crown Pastries Fine Middle Eastern Pastries 2086 Lawrence Ave East (Lawrence & Warden) Toronto ON. M1R 2Z5 Tel 647.351.2015 www.crownpastriesbaklava.com	 I.D.A. Part of the "Royal" family of pharmacies. Pharmacists Sarkis Balian Vartan Balian Maral Abdalian Balian	 ANI BAKERY ԱՆԻ ՓՈԱՊԱՆ Middle Eastern Pizza Lahmajoun ARSEN DABBAGHIAN 25 Howden Road, Unit #2 Scarborough, Ontario M1R 3C8 Tel: 416.285.7164

ՀՕՄ-ի Լաւալի «Ծուշի» մասնաճիւղի Սեմինարը

Շաբաթ, 3 Յունիս 2017-ին, կազմակերպութեամբ ՀՕՄ-ի Լաւալի «Շուշի» մասնաճիւղի դաստիարակչական յանձնախումբին, Լաւալի Հայ կեդրոնի «Պարոնեան» սրահէն ներս տեղի ունեցաւ սեմինար մը, որուն խորագիրն էր «Հայ կիներ ինչպէ՞ս կրնայ անկարելին կարելի դարձնել»:

Առաւօտեան ժամը 9-10 նախաճաշի հիւրասիրութենէն ետք, որ պատրաստուած էր յանձնախումբի անդամներուն կողմէ, ընկ՛հ. Տալիտա Պալլոգեան բացուած յայտարարեց սեմինարը եւ հրաւիրեց մասնաճիւղի ատենապետ ընկ՛հ. Ազգանուշ Հատիտեանը փոխանցելու վարչութեան խօսքը: Ընկ՛հ. Հատիտեան բարի գալուստ մաղթեց ներկաներուն, ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային վարչութեան ատենապետ ընկ՛հ. Արմինէ Կարապետեանին եւ մասնաճիւղին ներկայացուցիչ Անի Գրաբեանին եւ իր ուրախութիւնը յայտնեց, որ մեծ թիւով երիտասարդներ ներկայ են այս սեմինարին:

Ընկ՛հ. Պալլոգեան ներկայացուց առաջին դասախօսը՝ ընկ՛հ. Լոուի Ապրաքեանը.

Լոուի Ապրաքեան ծնած է Մոնթրէալ, 1986-ին: Փոքր տարիքէն անդամագրուած է ՀՅԴ Գանատայի Պատանեկան եւ ապա Երիտասարդական միութեանց շարքերուն: Ան վարած է վարչական պաշտօններ եւ ստանձնած է Կեդրոնական վարչութեան ատենապետութիւնը: Մեծ հետաքրքրութիւն ունենալով մանկավարժութեան հանդէպ, ուսանած է մանկավարժութիւն McGill Համալսարանէն ներս: Աւարտելէ ետք, վեց տարիներ պաշտօնավարած է Սուրբ Յակոբ վարժարանէն ներս, որպէս նախկին թարանի ուսուցչուհի: Այժմ տնօրէնութեան անդամ է նոյն վարժարանին մէջ եւ շուտով կը տիրանայ Administration de l'education մագիստրոսի աստիճանը Universite de Montreal-ի մէջ:

Ընկ՛հ. Ապրաքեանի դասախօսութեան նիւթն էր «Դաստիարակել յառաջիկայ սերունդները՝ զօրացնելով իրենց արմատները, թուի՛ք տալու իրենց ապագայ կեանքին»: Ան նախ սահմանեց «Հազարամեակի» սերունդը, անոնց պահանջները եւ անոնց յատկութիւնները ըսելով. «1980-ական թուականէն ետք ծնողները տարբերեցան նախորդ սերունդէն, անոնց համար հաճոյքը նոյնքան կարեւոր է որքան գործը, կը պահանջեն հակալիւրտութիւնը այս երկուքին, կ'ուզեն տարբեր փորձառութիւններ ունենալ, յաճախ գործ կը փոխեն, կը ձգտին լաւ միջավայրի մէջ աշխատելու եւ փոփոխուն ժամեր ունենալու: Անոնց գործելակերպը արագընթաց պէտք է ըլլայ, համացանցի գործածութիւնը անխուսափելի է եւ տարբերութիւն չեն դնել մեծի ու փոքրի

կամ գործատիրոջ եւ աշխատողի յարաբերութեան մէջ»: Ընկ՛հ. Ապրաքեան հազարամեակի սերունդը որակեց ստեղծագործ, ղեկավարող, խմբային աշխատանքի հաւատացող, ինքզինք ճանչցող եւ յարմարող սերունդ մը: Եզրափակելով ընկ՛հ. Ապրաքեան հարցադրումներ ըրաւ հայկական ինքնութեան մասին. ո՞վ է հայը եւ ինչպէ՞ս դաստիարակել նոր հազարամեակի սերունդը: Ընտանիքը, հայ դպրոցը եւ հայկական միութիւններն են, որոնք պիտի զարգացնեն հայու ոգին անհատին մէջ: Հմուտ ըլլալ հայերէն լեզուին, հայոց պատմութեան եւ մշակութիւն կարեւոր ազդակներ են, որ հայը կառչած մնալով իր արմատներուն կարենայ դիմագրաւել ապագան: Հոս է հայ կնոջ դերը, որպէս մայր, ուսուցիչ եւ որպէս միութեանական գործիչ:

Երկրորդ դասախօսն էր պրն. Կարպիս Մէշէֆէճեան: Ընկ՛հ. Տալիտա Պալլոգեան կարգաց դասախօսին հակիրճ կենսագրութիւնը: Կարպիս Մէշէֆէճեան ծնած է Լիբանան: Գանատա գաղթած է 1992-ին: Լիբանանի մէջ եւ Գանատա ան գործօն անդամ է ազգային զանազան կազմակերպութիւններու մէջ:

Ան հոգեբանութեան Պսակաւոր Արուեստից (BA) վկայականը ստացած է 1985-ին Պէյրութի Ամերիկեան համալսարանէն: Իսկ մագիստրոսի (MPH) վկայականը Հանրային Առողջութեան մարզին մէջ, 1987-ին, նոյն համալսարանէն:

1995-ին Մոնթրէալի McGill Համալսարանէն ստացած է մագիստրոսի աստիճան (Msc) համաճարակաբանութեան եւ կենսափիճակադրութեան մարզերուն մէջ եւ 2000-ին Rochester Համալսարանէն (PhD) Հանրային հիւանդաբանութեան մարզին մէջ:

Ներկայիս ան կ'աշխատի Քեպէզ նահանգի առողջապահութեան նախարարութեան մէջ: Ան մաս կը կազմէ Մոնթրէալ քաղաքի Հանրային առողջապահութեան բաժանմունքին եւ կ'աշխատակցի առողջապահութեան գիտելիքներ համադրող հետազօտական իմբակին, իրեւ ժամանակէն հանրային հիւանդաբանութեան հետազօտութիւններու: Հեղինակն է 46 գիտական յօդուածներու, որոնք հրատարակուած են առողջապահական-գիտական թերթերու մէջ: Ամուսնացած է եւ ունի երկու զաւակ:

Պրն. Մէշէֆէճեանի նիւթն էր «Կենսաբանական իմաստով փոխել անձը»: Ան գիտական բայց մատչելի ձեւով գիտելիքները փոխանցեց ներկաներուն, ցոյց տալու համար թէ ինչպէ՛ս կարելի է փոխել ճակատագիրը եւ անկարելին կարելի դարձնել՝ կերտելով անձը եւ այդպիսով վերափոխութեան ենթարկել յառաջիկայ սերունդներու ճակատագիրը: Ան խօսեցաւ Epigenetics-ի մասին: Օրինակով բացատրեց, թէ ինչպէ՛ս բնա-



լուծարանի մէջ մուկին բջիջներուն փոխարկումով թէ՛ մուկին գոյնը եւ թէ՛ չափը կարելի է փոխել: Իսկ երբ մայր մուկը ճնշուածութեան (Stress) կ'ենթարկուի, մինչեւ չորս սերունդ այդ անհանգստութիւնը կը փոխանցէ իր զաւակներուն: Բացատրեց transgenerational inheritance-ը, որ հայերէնով թարգմանած էր վերածագումնաբանութիւն եւ անդրսերնդային ժառանգութիւն արտայայտութեան: Ան աւելցուց ըսելով, թէ ոեւէ անձ կազմաւորումն է հետեւեալ տուեալներուն. միջավայր, կեանքի պայմաններ, ֆիզիքական եւ զգացական ազդակներ, մշակութային եւ ընկերային պայմաններ: Պրն. Մէշէֆէճեան եզրափակեց իր ներկայացումը. «Երբ կը հասկնանք անձին բնութիւնը եւ ծինային կազմուածքը եւ գիտենք դաստիարակութեան կարեւորութիւնը՝ ուրեմն անկարելի չէ փոխել ճակատագիրը»:

Կարճ դադարէ մը ետք ընկ՛հ. Պալլոգեան ներկայացուց երրորդ դասախօսը՝ տիկ. Ժուլի Հինտոյեանը:

Ժուլի Հինտոյեան ծնած է Մոնթրէալ, իր նախնական եւ երկրորդական ուսումը ստացած է Սուրբ Յակոբ Ազգային վարժարանէն: Յաճախած է College de Bois-de-Boulogne եւ Universite de Montreal, ուրկէ ստացած է մագիստրոսի աստիճան Nursing Science-ի մէջ: Տասը տարիէ ի վեր ուսուցչութիւն կ'ընէ College de Bois-de-Boulogne-ի Nursing-Soins Infirmiers բաժնին մէջ: Ան գործօն անդամ է Մոնթրէալի եւ Լաւալի հայ գաղութին: Ան մաս կազմած է ՀՄԸՄ-ին, Համագլխային եւ Սուրբ Յակոբ Մայր եկեղեցւոյ Կրթական Գործադիր մարմին: Ամուսնացած է եւ ունի երեք զաւակ:

Տիկ. Հինտոյեանին նիւթն էր «Երիտասարդանալ», ան հարցումով մը սկսաւ իր բանախօսութիւնը, թէ ի՛նչ կը նշանակէ երիտասարդանալ: Անշուշտ

80-է աւելի ներկաներէն իւրաքանչիւրը իր անձնական սահմանումը ունէր: Որմէ ետք ան նկարագրեց լիաժամ աշխատող մօր անձնական կեանքն ու անոր դժուարութիւնները. ժամանակի անբաւարարութիւն, յոգնածութիւն, յանցանքի զգացում, որ բաւարար ժամանակ չ'անցըներ զաւակներուն հետ եւ այլն, եւ այս վիճակին պատճառած ճնշուածութիւնն ու անոր ազդեցութիւնը զաւակներուն վրայ: Երբ մայրը ուրախ չէ, ամբողջ ընտանիքը կը տուժէ: Ան շահեկան թելադրութիւններ ըրաւ, որ մայրերը իրենք իրեց ժամանակ տրամադրեն, խոկան եւ ներկան ապրին, որովհետեւ անցեալը յուշ է, իսկ ապագան՝ երեւակայութիւն, միակ իրականը ներկան է: Ան քաջալերեց մայրերը, որպէսզի կեդրոնանան իրենց ըրածներուն որակին վրայ եւ ոչ թէ քանակին: Ան ըսաւ, եթէ օրական երեք նոր պատճառներ գտնենք, որոնց համար գոհուանակութիւն կը զգանք, կրնանք ժպտիլ ու դրական մտածումներ ունենալ եւ արդէն բաւարարուած կ'ըլլանք: Իսկ ժխտական մտածումները պէտք է վանենք եւ ազնուութեամբ ու սիրով վարուինք մենք մեզի հետ: Այսպիսով կ'ըլլանք ուրախ մայրեր, եւ մեր յաջողութեան հակալիւրտ կ'ունենանք մեր ձեռքերուն մէջ՝ յօգուտ մեր զաւակներուն:

Սեմինարը, որ տեւեց երեք ժամ, իր աւարտին հասաւ ընկ՛հ. Տալիտային շնորհակալական խօսքերով: Մուտքի տոմսերուն վիճակահանութեան նուէրները Indigo գրատուէն նուիրուած գիրքեր էին:

Գնահատելի էր Դաստիարակչական յանձնախումբին տարած բժախնդիր աշխատանքը, ճշգրտագիտութիւնը, դասախօսներու ընտրութիւնն ու ներկայութիւն հաւաքելու ջանքերը:

Մարալ Յովսէփեան

[AB]

ALINE

BEKEREJIAN

NOTAIRE • NOTARY

ՆՈՏԱՐ Ալին Պեքերեճեան

Achat

Առուստր

Hypothèque

Մնշարժ Կալուածք

Refinancement

Վերաֆինանսաւորում

Mandat

Պատուի

Testament

Կտակ

Succession

Կալուածք

Marriage

Ամուսնութիւն

Procuratoin

Փոխանորդագիր

Purchase

Mortgage

Refinance

Mandate

Will

Estate

Marriage

Power of Attorney

180, rue Fleury ouest

Montréal, Qc, H3L1T5

T 514.382.7222

F 514.381.1818

aline.b@notarius.net

www.abnotaires.com

Շաաայութիւնները կը մատուցուին Սրաքերէն, Հայերէն, Ֆրանսերէն, եւ Անգլերէն լեզուներով:

Այցելեցեք Ս. Յակոբ Առաջ. Մայր Եկեղեցւոյ Կիրակնօրեայ դպրոցի կայքէջը՝

www.sourphagop.org

ՀՕՄ-ի Մոնթրէալի Սօսէ մասնաճիւղի ընկերային ծառայութեան գրասենեակը բաց է ամէն հինգշաբթի ժամը 12:00-էն 4:00:

Այլ օր ժամադրուելու համար հեռաձայնել 514 335-2222 թիւին:

6 ՀՈՐԻԶՈՆ, 19 ՅՈՒՆԻՍ 2017

Օթթաուայի մէջ բացումը կատարուեցաւ գանատահայ աշխարհահռչակ լուսանկարիչ Եուսուֆ Քարշի յուշարձանին



9 Յունիս 2017-ին Գանատայի մայրաքաղաք Օթթաուայի կեդրոնը՝ Հայաստանի եւ Գանատայի միջեւ դիւանագիտական յարաբերութիւններու հաստատման 25-ամեակին եւ Գանատայի Համադաշնակցութեան 150-ամեակին զոյգ առիթներով, Օթթաուայի Համադաշնակցութեան պողոտային վրայ տեղի ունեցաւ գանատահայ աշխարհահռչակ լուսանկարիչ Եուսուֆ Քարշի յուշարձանի բացման արարողութիւնը: Յուշարձանի բացումը կատարեցին Գանատայի մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպան տիար Արմէն Եկանեան, Գանատայի Մերակուտականի նախագահ Ճորճ Ֆիլքին եւ յուշարձանի հեղինակ, հանրածանօթ գանատահայ քանդակագործ Մկրտիչ Տարազեանը:

Բացման արարողութենէն ետք, Օթթաուայի կեդրոնը գտնուող «Շաթօ Լորիէ» պանդոկի «Գանատական» սրահին մէջ տեղի ունեցաւ Հայաստանի Հանրապետութեան դեսպանատան կազմակերպութեամբ պաշտօնական ընդունելութիւն մը, որուն կը մասնակցէին Մերակուտականի նախագահ Ճորճ Ֆիլքին, Հայաստանի Հանրապետութեան մէջ Գանատայի դեսպան Ճոն Քրրը, գանատացի ծերակուտականներ եւ երեսփոխաններ, Գանատայի մէջ այլ երկիրներու դեսպաններ, Գանատայի արտաքին գործոց եւ ժառանգութեան նախարարութիւններու բարձրաստիճան ներկայացուցիչներ, դիւանագէտներ, Հայ Առաքելական եկեղեցւոյ հոգեւոր հայրեր, հայ համայնքի ղեկավարներ, մեծ թիւով գանատահայեր եւ լրագրողներ:

Դեսպան Եկանեան այս առթիւ իր արտասանած խօսքին մէջ նշեց, որ Օթթաուայի կեդրոնը Եուսուֆ Քարշի արձանի գետեղումը միշտ պիտի հանդիսանայ հայ-գանատական բարեկամական յարաբերութիւններու գեղեցկագոյն խորհրդանիշներէն մէկը: Դեսպանը ընդգծեց, որ յատկանշական է Համադաշնակցութեան պողո-

տային վրայ արձանին բացումը ճիշդ այն ժամանակ, երբ կը նշուին Գանատայի 150-ամեակն ու Հայաստան-Գանատա դիւանագիտական յարաբերութիւններուն 25-ամեակը: Ան իր խօսքին մէջ նաեւ շնորհակալութիւն յայտնեց Գանատայի կառավարութիւնը ներկայացնող պաշտօնատարներուն եւ գանատահայ համայնքի անդամներուն ու կազմակերպութիւններուն, որոնք իրենց ներդրումը ունեցան այս ծրագրի իրականացման:

Գանատայի կառավարութեան անունով ողջոյնի խօսք արտասանեց Գանատայի ժառանգութեան նախարարի խորհրդարանական քարտուղար Արիֆ Վիրանի, որ շնորհակալութիւն յայտնեց Հայաստանի Հանրապետութեան դեսպանատան եւ հայ համայնքին՝ տարուած մեծածաւալ աշխատանքին եւ Համադաշնակցութեան 150-ամեակին առթիւ Գանատային նուիրուած այս բացառիկ նմոյշին համար:

Ձեռնարկին ընթացքին դեսպան Եկանեան հայ-գանատական յարաբերութիւններու զարգացման գործընթացին մէջ իր ունեցած մեծ ներդրումին համար Հայաստանի Հանրապետութեան պատուոյ գիրերով պարգեւատրեց Հայաստանի Հանրապետութեան մէջ Գանատայի դեսպան Ճոն Քրրը եւ Գանատայի արտաքին գործոց նախարարութեան Արեւելեան Եւրոպայի եւ Եւրասիոյ վարչութեան գլխավոր տնօրէն Էլիսըն ԼըՔլերը: Հայաստանի Հանրապետութեան դեսպանատան պատուոյ գիրեր յանձնուեցան նաեւ Եուսուֆ Քարշի յուշարձանի իրագործման ի նպաստ առանձնաշատակ ներդրում ունեցած գանատահայերու:

Երեկոյթին ընթացքին հայկական ազգային երաժշտութիւնն ու պարարուեստը ներկայացնող կատարումներով հանդէս եկան գանատահայ երիտասարդներ:

Թորոնթոյի «ՆՈՐ ՀԱՅ ՀՈՐԻԶՈՆ» յատագիրը կարելի է դիտել Շաբաթ առաւօտները ժամը 9:00-էն 10:00, իսկ Նոյն յայտագրի կրկնութիւնները Կիրակի օրերը առաւօտեան ժամը 7:00-8:00 եւ Երեքշաբթի օրերը կէսօրուայ ժամը 12:00-1:00 OMNI 1 կայանէն:

«Հայ Հորիզոն» հեռատեսիլի յայտագիրը կը սփռուի հետեւեալ կայաններէն եւ ժամերուն՝

Videotron: HD616 կամ SD16	Շաբաթ - 08:30 (առաջին պիտում) եւ 1:30am
Bell Fibe: HD1216 կամ SD216	Կիրակի - 3:30pm
	Երկուշաբթի - 08:00, 10:30pm, 1:30am
	Երեքշաբթի - 12:00pm
	Չորեքշաբթի - 6:30am եւ 7:30pm
	Հինգշաբթի - 12:30pm, 12:30am
	Ուրբաթ - 3pm
	Ուղիղ արձակում՝ www.icitelevision.ca

Միջազգային Ճգնաժամային Խումբը Ռարձեալ Հաշտարար Ռատաւորի Քղամիրով

Ինչպէս յայտնի է, քղամիդ սովորաբար անուա–նում են թագաւորական կամ իշխանական ծիրանին, մեր ժամանակներում՝ նաեւ դատաւորի պատմուճանը, մի թիկնոց, որն ընդունւում է որպէս առաքինութեան, ան–բասիրութեան, անաչառութեան, արդարադատութեան խորհրդանիշ։ Միեւնոյն ժամանակ, քղամիդը նաեւ այլ իմաստ է պարունակում՝ փոխաբերօրէն ընկալուելով իբրեւ որեւէ բան քօղարկելու եւ այն դրական՝ վեհ կեր–պարանքով ներկայացնելու միջոց։ Յաւօք, երկրորդ իրողութեանը մենք, կամայ թէ՛ ակամայ, յաճախակի ենք հանդիպում։ Լինի դա տեղական բնոյթի, թէ՛ մի–ջազգային չափանիշի կատարուած փաստ, իրողութիւն։ Ու թէկուզ կանխաւ գիտենք, գիտակցում ենք այդ յոռի երեւոյթի անխուսափելիութիւնը միջանձնային, թէ՛ մի–ջազգային յարաբերութիւններում, սակայն, այնուամե–նայնիւ, դարձեալ զարմանում ենք՝ ինչո՞ւ այդպէս։

Օրինակ, հայ հանրութիւնը քաջատեղեակ է Մի–ջազգային ճգնաժամային խումբ կոչուող կազմակեր–պութեան գործունէութեան բնոյթին։ Միեւնոյն ժամա–նակ մեզ համար յստակօրէն տեսանելի է նրա բարոյա–կան կերպարը։ Գիտենք, թէ՛ ի՛նչ ուժային կեդրոնների թելադրանքով են ձեւաւորւում նրա մշտապէս կանխա–կալ կողմնորոշումները։ Ինչպէս յայտնի է, այդ կառոյ–ցը, որի կեդրոնակայանը գտնւում է Պրիւքսելում, որն իր դուստր գրասենեակներն ունի եւրոպական մի շարք մայրաքաղաքներում, միաւորում է հինգ մայր ցամաք–ներից հաւաքագրուած շուրջ 80 մասնագէտի։ Կազմա–կերպութիւնը զբաղւում է տարբեր երկրներում հակա–մարտութիւնների ուսումնասիրութեամբ ու վերլուծու–թեամբ, իրաւապաշտպան գործունէութեամբ՝ ուղղուած տարաբնոյթ՝ ազգամիջեան, միջազգային եւ այլ բա–խումների կանխմանն ու զսպմանը։ Թէ՛ ի՛նչ չափով է նրան յաջողուել կեանքի կոչել իր կանոնադրական նպատակներն ու խնդիրները՝ թողնենք կառոյցի դեկա–վար մարմինների խղճին։ Յամենայն դէպս անձամբ ես դժուարանում եմ առանձնացնել նման որեւէ դէպք, իսկ աշխարհը, այդ թւում՝ նրա համաեւրոպական հատուա–ծը, շարունակում է արինահնդ բախումների թատերա–բեմ՝ մնալ։ Նշենք միայն, որ ձգնաժամային խումբը գործունէութեան այդ շրջանակներում քանիցս անդրա–դարձել է նաեւ դարաբաղեան հիմնախնդրին, ազպէյ–ճանա–դարաբաղեան հակամարտութեանը։

Եւ ահա այդ միջազգային կազմակերպութիւնը հերթական անգամ իր ուսերին նետելով առաքինու–թեան, անբասիրութեան, անաչառութեան եւ արդարա–դատութեան խորհրդանիշ քղամիդը՝ օրերս հանդէս է եկել քառասուն էջից բաղկացած գեկոյցով՝ նուիրուած ազրպէյճանա–դարաբաղեան հակամարտութեան գօ–տում առաջացած ռազմաքաղաքական իրավիճակի փորձագիտական գնահատմանը։ Զեկոյցը հրապարակ–ուել է միանգամայն ահազանգային վերնագրի ներքոյ՝ «Լեռնային Ղարաբաղում պատերազմի ամպը եւ կ’ուտակուել»։ Այդ փորձագիտական վերլուծութեան մէջ անդրադարձ է կատարւում խաղաղ բանակցու–թիւնների փակուղում յայտնուելու պատճառներին, կանխատեսւում են մարտական գործողութիւնները հերթական հնարաւոր բախման դէպքում, թէ՛ ինչպէ՛ս եւ ռազմաճակատի ո՞ր հատուածներում դրանք կ’ըն–թանան։ Մասնաւորապէս, նշւում է, որ՝ Լեռնային Ղա–րաբաղում 2016թ. ապրիլեան բախումներից յետոյ Հա–յաստանը եւ Ազրպէյճանն առաւել մօտ են պատերազ–մական իրավիճակին, քան երբեւէ՝ 1994–ից ի վեր, որ կարգաւորման գործընթացը լճացած է՝ աւելի գայթակ–ղիչ դարձնելով ուժի կիրառման հաւանականութիւնը՝ անոււազն մարտավարական նպատակներով, եւ երկու կողմերը ներկայումս կարծես թէ պատրաստ են առձա–կատման։ Առկայ լարուածութիւնը, ասւում է գեկոյ–ցում, կարող է վերածել լայնածաւալ հակամարտու–թեան, տեղիք տալ մեծ թրւով զոհերի քաղաքացիական բնակչութեան շրջանում եւ յանգեցնել տարածաշրջա–նային գլխաւոր ուժերի՝ Ռուսաստանի եւ Թուրքիայի միջամտութեանը։ Խմբի փորձագէտները յորդորում են, որպէսզի Մինսքի խմբի համանախագահ երկրները՝ Ռուսաստանը, Ֆրանսան եւ Միացեալ Նահանգները մի կողմ դնեն իրենց անհամաձայնութիւնները եւ համա–կարգուած կերպով ճնշում գործադրեն հակամարտ կող–մերի վրայ՝ ներկայիս կաթուածահար վիճակից ելք գտնելու եւ բռնութեան վերսկսման վտանգը նուա–ղեցնելու համար։ Հայաստանը, նշում են ձգնաժամա–յին խմբի վերլուծաբանները, անհանգստացած է Լեռ–նային Ղարաբաղի անվտանգութեամբ եւ վրդովուած Պաքուի յարաճոււն վճռականութեամբ, ուստի պահան–ջում է, որպէսզի բանակցութիւններից առաջ նուազեց–ուեն անվտանգութեան ռիսքերը, որոշակիօրէն՝ իրակա–նացուեն այդ կապակցութեամբ Վիեննայի եւ Ս. Փե–թերսպուրկի համաձայնութիւնները։ Իսկ Ազրպէյճանը, դժգոհ լինելով տեւական սթաթիւս քուռից եւ նրանից,

որ յաւելեալ անվտանգութեան միջոցները կարող են է՛լ աւելի ամրապնդել այն, պնդում է, որ բովանդակային քննարկումները չեն կարող յետաձգուել։ Այդ պայ–մաններում որեւէ միջադէպ կարող է իրավիճակը դուրս բերել վերահսկողութիւնից, յատկապէս երբ երկու հա–սարակութիւններն էլ համակարծիք են, որ յաջորդ առ–ճակատումն անխուսափելի է, եւ որ՝ Լեռնային Ղարա–բաղի խնդրի »վերջնական կ’արգաւորումը» անհրա–ժեշտ է, եթէ անգամ դա նոր պատերազմ է ենթադրում։

Մի խօսքով, փաստաթղթում բերւում են հանրա–յայտ իրողութիւններ, որոնց փորձագիտական գնահա–տումները գրեթէ մօտ են իրականութեանը։ Ասացի՝ գրեթէ։ Քանզի առկայ իրողութիւնները ներկայացուած են շատ աւելի թանձր գոյներով, քան իրականում դրանք կան։ Միւս կողմից՝ այդ ամէնը նկարագրւում է՝ հիմք ընդունելով կողմերի հաւասարեցման, համա–հարթեցման սկզբունքը, ինչպէս որ դա սովորաբար ար–ւում է ԵԱՀԿ Մինսքի խմբի համանախագահութեան պարբերաբար հրապարակուող յայտարարութիւններում, երբ թէ՛ Հայաստանը եւ թէ՛ Ազրպէյճանը միջազգային հանրութեանը ներկայացւում են նոյնաչափ մեղքի բաժնով եւ հաւասարաչափ պատասխանատուութեամբ։ Բացառութեամբ՝ համանախագահների վերջին յայտա–րարութիւնից, որի մէջ յստակօրէն նշուել է, որ հրադա–րարի խախտումն առաջինը նախաձեռնել է ազրպէյճա–նական կողմը, իսկ հայկական կողմը ստիպուած էր պա–տասխան քայլի դիմել։

Բայց քարը գլուխը, թէ ինչո՛ւ այդպէս նոյնական են ԵԱՀԿ Մինսքի խմբի համանախագահութեան եւ Միջազգային ճգնաժամային խմբի գնահատումները։ Դա, ի վերջոյ, նաեւ հեղինակութեան խնդիր է այդ կա–ռոյցներից իւրաքանչիւրի համար, եւ թող իրենք տես–նեն իրենց գլխի ճարը։ Սակայն էականն իրավիճակի գնահատման նմանութեան մէջ չէ միայն։ Այն ակն–յայտ է նաեւ առաջարկուող լուծումներում։ Այսինքն գեկոյցում գրեթէ բառացիօրէն կրկնւում են այն լու–ծումներն իրենց յաջորդականութեամբ, որոնք չարադր–ւուած են Մատրիտեան սկզբունքներում։ Իսկ ինչպէս յայտնի է, բանակցային գործընթացի առանցք դարձած այդ տխրահռչակ փաստաթղթում գլխաւորն ու առաջ–նահերթը «հող՝ կարգավիճակի դիմաց» սկզբունքն է, ինչը նշանակում է ոչ այլ ինչ, քան 90–ականների սկզբի պատերազմի ընթացքում հայկական ուժերի ազատագրած շրջանների որոշ մասի վերադարձ Ազր–պէյճանին՝ Լեռնային Ղարաբաղի անորոշ եւ անյայտ կարգավիճակի դիմաց։Սակայն ուշադրութիւն է գրա–ւում ձգնաժամային խմբի եւս մէկ դիտարկում–առա–ջարկութիւն, որ կարծես թէ համահունչ լինելով Մադ–րիդեան սկզբունքների համապատասխան պահանջին, միեւնոյն ժամանակ բովանդակային առւմնով տարբեր–ւում է նրանից։ Բանն այն է, որ նշուած սկզբունքնե–րում առաջարկւում է փախստականների վերադարձ՝ նախկին բնակութեան վայրեր, ինչը, գոււ եսթագրա–բար, կարելի է վերագրել նաեւ Ազրպէյճանից բռնատե–ղահանուած հայ քաղաքացիներին։ Թէկուզ մեզ համար պարզից էլ պարզ է, որ Մինսքի խմբի համանախագա–հութիւնը տուեալ պարունակում նկատի ունի բացառա–պէս ազրպէյճանցի փախստականներին՝ անտեսելով Ազրպէյճանից բռնատեղահանուած աւելի քան կէս միլիոն հայ փախստականների քաղաքացիական իրա–ւունքները։ Մինչդեռ ահա, ձգնաժամային խմբի գնա–հատմամբ, որն արձանագրուել է նրա մէկ այլ՝ դեռեւս 2012թ. փետրուարին կազմուած

«Ազրպէյճանում ներքին տեղափոխուած անձանց հիմնախնդրի լուծումը» գեկոյցում, խօսքը վերաբերում է միայն, ինչպէս այդ փաստաթղթում է արձանագր–ւուած, «Լեռնային Ղարաբաղից եւ նրան յարակից շրջաններից, բռնատեղահանուած 600 հազար ներքին տեղափոխուածներին»։ Պարզւում է, որ այդ անձանցից շուրջ 400 հազարն ապրում է այնպիսի կացարաննե–րում, որոնք չեն համապատասխանում թեքնիք եւ առողջապահական չափանիշներին, իսկ 128 հազարը՝ ներքին տեղափոխուածներ եւ մշտական բնակիչներ, բնակւում են հակամարտ գօրքերի չփման գծի անմի–ջական մերձակայքում։ Ինչպէս տեսնում ենք, գեկոյ–ցում խօսք անգամ չկայ ոչ միայն Ազրպէյճանից բռնազաղթած հայ քաղաքացիների, այլեւ մարտական գործողութիւնների պատճառով Ազրպէյճանի վերահս–կողութեան տակ անցած Շահումեանի շրջանի, Գետաշե–նի ենթաշրջանի բոլոր հայաթափուած բնակավայրերի, Մարտակերտի եւ Մարտունու շրջանների մի շարք հայ–կական գիւղերի բնակիչների վերադարձի մասին։

Մի խօսքով։ Փորձեմ ամփոփել։ Տասնամեակների մեր փորձառութիւնից յստակ գիտենք, ուստի եւ կաս–կած չի յարուցում, որ այդ եւրոպական կառոյցը՝ Մի–ջազգային ճգնաժամային խումբը, դարաբաղեան հիմ–նախնդրի վերաբերեալ իր փորձագիտական գեկոյցնե–

րում երբեք չի առաջնորդուել համընդունելի իրաւա–քաղաքական ու բարոյական չափանիշներով եւ մշտա–պէս հանդէս է գալիս ազրպէյճանաւէտ կողմնորոշ–մամբ։ Բայց ահա, իմանալով հանդերձ, ամէն անգամ էլ շարունակում ենք գարմանալ կամ վրդովել, աւելի ճիշդ՝ վրդովուած գարմանալ, թէ ինչո՛ւ այդ աստիճան կողմնապահ է նա իր դիրքորոշման մէջ։ Ձէ՞ որ ոււմ՝ ոււմ, բայց ճգնաժամային խմբի փորձագէտներին յայտա–նի են բուն դարաբաղեան հիմնախնդրի ծագման թէ՛ պատմաիրաւական եւ թէ՛ իրաւաքաղաքական ակունք–ները, ազրպէյճանա–դարաբաղեան հակամարտութեան դրդապատճառները, այն կարգաւորելու կոչուած մի–ջազգային սկզբունքները, որոնց շրջանակներում ահա քառորդ դարից ի վեր շարունակւում է բանակցային գործընթացը։ Աւելի՛ն. գեկոյցում անտեսւում է ԵԱՀԿ 1994թ. Պուտափեշտի գազաթնաժողովի եզրափակիչ որոշման յայտնի դրոյթն առ այն, որ Լեռնային Ղարա–բաղը հանդիսանում է հակամարտութեան լիիրաւ կողմ, հետեւապէս գեկոյցում խօսք անգամ չի ասւում բա–նակցային գործընթացին Ստեփանակերտի անմիջական՝ լիարժէք, իրաւահաւասար մասնակցութեան մասին։ Անշուշտ, անկախ այն հանգամանքից, որ այդ տաս–նամեակների ընթացքում գործընթացը վերջնակէտին չի հասել, այնուամենայնիւ, բանակցութիւնների անժխտելի ձեռքբերում է հակամարտ գօրքերի չփման գծում հաստատուած հրադադարը։ Այո, յարաբերական է այն, պարբերական խախտումներով յագեցած, բայց, ամէն դէպքում, հեռու է լայնածաւալ պատերազմական իրավիճակից։ Այլ խնդիր է, թէ հակամարտ կողմերից ո՞վ է ամէն անգամ նախաձեռնում այդ խախտումները։ Այլ խնդիր է, թէ ինչու միջազգային հանրութիւնը՝ ի դէմս ՄԱԿ–ի, ԵԱՀԿ–ի եւ նրա Մինսքի խմբի համանա–խագահութեան, չի մատնանշում ու սաստում մեղաւոր կողմին, չի պարտադրում նրան դադարեցնել մարդկա–յին անիմաստ կորուստների տեղիք տուող այդ խախ–տումները։ Անգամ անտեսուել եւ շարունակաբար ան–տեսւում է, թէ ո՞վ է նախաձեռնել անցեալ տարուայ ապրիլեան լայնածաւալ պատերազմը՝ երկուստեք աղէ–տայի հետեւանքներով հանդերձ, որոշակի՝ ազրպէյճա–նական կողմի արկածախնդիր դերակատարութիւնը։

Յաւօք, հրադադարի հաստատումից յետոյ անցած բոլոր տարիներին, ինչպէս նշեցի, միայն մէկ անգամ է, որ Մինսքի խմբի համանախագահները յստակ չեշտել են այդ խախտումները նախաձեռնած կողմին՝ Ազր–պէյճանին։ Մենք՝ հայերս, ի հարկէ, ցնծութեամբ ըն–դունեցինք այդ իրողութիւնը՝ այն գնահատելով որպէս միջազգային առաքելութեան յետազայ ողջամիտ պահ–ուածքի սկիզբ, հրադադարի պահպանման բանալի։ Բայց, արդեօք, այդ չեշտադրումից յետոյ էապէս փոխ–ուե՞լ է ԵԱՀԿ–ի Մինսքի խմբի համանախագահութեան հրապարակային դիրքորոշումն Ազրպէյճանի նման սանձաքձակ պահուածքի նկատմամբ։ Արդեօք, յիշու՞մ ենք որեւէ էական տեղաշարժ ԵԱՀԿ վերաբերմունքում, երբ Ազրպէյճանի կամայական որոշմամբ փակուեց այդ հեղինակաւոր միջազգային կազմակերպութեան գրա–սենեակը Պաքւում եւ ապա նոյնքան կամայական դիր–քորոշման պատճառով դադարեցուեց նաեւ Երեւանի գրասենեակի ֆինանսաւորումը։ Իսկ մինչ այդ փակուել էր նաեւ Թիֆլիսում գործող նրա գրասենեակը։ Ար–դիւնքում ԵԱՀԿ–ն ներկայումս Անդրկովկասում չունի եւ ոչ մի յենակէտ, որի միջոցով կարողանայ իրակա–նացնել իր կանոնադրական գործառոյթները տարա–ծաշրջանում։ Աւելի՛ն. համանախագահների վերջին յայտարարութեան վերոյիշեալ շեշտադրումը արդեօք չա՞տ է ազդել Պաքուի վարքագծի վրայ։ Հազիւ թէ։ Կարելի է ասել՝ դոյզն իսկ։ Ազրպէյճանական գինուժը շարունակում է հրադադարի խախտումները չփման գծում, իսկ Պաքուից, ի լրումն, նոր սպառնալիքներ են հնչում՝ արդէն իսկ Արցախի խաղաղ բնակավայրերը հեռահար հրետանային կրակի ենթարկելու հաւանակա–նութեան մասին։

Ընդհանուր առմամբ, անգէն աչքով էլ տեսանելի է, որ ազրպէյճանա–դարաբաղեան հակամարտութեան կարգաւորման բանակցային գործընթացում եւ այդ պարունակում առկայ իրողութիւնների փորձագիտա–կան գնահատումներում չըջանառւում է համաեւրոպա–կան անհիմն, միանշանակ ու միասեռ մօտեցումը, ինչից չեն խուսափել եւ էէին էլ կարող խուսափել նաեւ Մի–ջազգային ճգնաժամային խմբի փորձագէտներն իրենց գեկոյցում։ Ձէին կարող, քանզի լծուած են նոյն սալին՝ իբրեւ երկրորդ կամ որեւէ այլ շարքի լծկաններ, որոնք պարտաւոր են իրենց քայլքը յարմարեցնել առջեւից ընթացող շարքի կամ շարքերի լծկանների համաչափ քայլքին։ Այլ կերպ՝ հազիւ թէ սալը տեղ հասնի։

ՄԻՔԱՅԷԼ ՀԱԶԵԱՆ
Քաղաքական վերլուծաբան

**SOURP KEVORK
ARMENIAN CHURCH
OF LAVAL PRESENTS**

**Ս. ԳԵՈՐԳ ԼԱ. ԵԿԵՂԵԾԻՆ
ԿԸ ՆԵՐԿԱՑԱՑՆԷ**

Opening act
Hrair Tarpinian
**Comedy Night
Part Deux**

FRIDAY, JUNE 23

Show Starts at 8pm - Happy Hour at 5pm - Tickets 30\$

SATURDAY, JUNE 24

Doors Open at 4pm - General Admission 20\$

SUNDAY, JUNE 25

Doors Open at 2pm - General Admission 10\$



@Festivalarmenien

@armfestlaval

@festivalarmenien



ANTIC



**PIERRE
CHAMMASSIAN**



ARMENCHIK



**KOKO
ASAYAN**



JOELLE

With The Participation of
**ANI DANCE
ENSEMBLE**

**♠♣♥♦ FRIDAY NIGHT ♠♣♥♦
POKER TOURNAMENT**



Registration at 6pm

- BUY-IN \$120
- CASH PRIZES
- OPEN BAR
- OPEN BUFFET
- PRO DEALERS

Saturday Night Intermission:
DJ PAUL KEYS

Info & Friday Night Tickets

ADMIN: 450-688-6795
LENA APRAHAMIAN: 514-928-9910
2865 BOUL. SOUVENIR, LAVAL,
QUEBEC (OLD CAVALIA LOCATION)
WWW.FESTIVALARMENIENDELAVAL.COM

**FREE ADMISSION
UNDER AGE OF 12**

(SATURDAY & SUNDAY)

**FREE ACCESS BALLOON
RIDES**



THANK YOU TO ALL OUR SPONSORS





Noor Fine Food™
Gourmet Mediterranean Cuisine



صحة و عافية
Saha & Afia




1 High Meadow Place, Unit 9, Toronto, Ontario M9L 0A3

Tel 416 745 3111 | Fax 416 745 9337



ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ԿԹԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Մոնթրեալի «Սանահին» մասնաճիւղը
կը ներկայացնէ:



SIRUSHO

Գանատայի մէջ առաջին մենահամերգ
մասնակցութեամբ՝ Համազգայինի
Անի զոյգ պարախումբերուն եւ Զնար երգչախումբին

Ուրբաթ 7 Յուլիս 2017, երեկոյեան ժամը 8-ին
Collège Laval, Théâtre Marcellin-Champagnat • 1275 Avenue du Collège A, Laval, Qc H7C 1W8

Տոմսեր՝ \$60, \$40, \$25 (16 տարեկան եւ վար)
Տոմսերու համար դիմել՝
Սիլվի Մերճանեան 514-773-9391
Վերա Բիգիրեան 514-333-7216 (երեկ. ժամը 9-էն ետք)



ANI
Ristorante

905.761.6484

1450 Clark Ave. West,
Thornhill ON L4J 7R5

LOOKING FOR FULL TIME CHEF TO GRILL

www.aniristorante.ca

Fine Dining
Catering
Party Room
FOR UP TO 10 PEOPLE

Manoir Gouin

Résidence pour
aînés autonomes
et semi-autonomes

À partir de **995\$** (par semaine)
Tous les repas, collations et supervision
médicale inclus
1½ à 4½

**Gicleurs automatiques
dans chaque appartement**

Մեկ հոս ուրախ եկ
Պն. Իրեկեան

Պատրաստ ԵՐԻՐ Կ'ՈՒՆԵՆԱՅ
ՁԵՐ ՀԱՆԳԱՏԵԼԱՆ ՏՈՒՆԷՆ ՆԵՐԱ:

Il n'y a pas d'âge pour être heureux!

12300 boul. Laurentien, Montréal H4K 2Z6
514.335.1881 • www.manoirgouin.com

THE VANDOLIVER ARAZ CHAPTER OF ARMENIAN RELIEF SOCIETY (HOM) PRESENTS

Concert
For the new Soseh Kindergartens of Artsakh.

Sevan Kochkarian

ARS Vancouver is proud to share with you, one of our own Sevan Kochkarian in unforgettable concert.
Sevan is Lyric Soprano from McGill Opera who has captured many hearts.
Armenian program will feature famous composers as well as National songs.
The evening will also delight the audience by guest appearances.

July 6 At 7:30 pm at Shadbolt Centre For Performing Arts
 6450 Deer Lake Avenue, Burnaby BC, V5G 2J3
Admission: \$25
 For Reservation Call: Clara Agopian: 604.961.6226 | Sevan Kochkarian: 604.939.0202
 Champagne reception to follow

ԱՅՍ ԱՆԿԻՒՆԷՆ Հայեցի կրթութիւն Բ.– Ծրագիր

Ծրագիր...

Ի՞նչ տեսակ կրթական ծրագիր պիտի ունենայ, պէ՛տք է ունենայ հայ դպրոցը։ Ընդհա՛նրապէս եւ ոչ պարզապէս հայեցի կրթութեան համար, որովհետեւ հայեցի կրթութիւնը վարժարանի կրթական ընդհանուր ծրագրին մաս կը կազմէ ու առանձին ոլորտ մը չէ։

Հայեցի կրթութեան ծրագիրը, ուրեմն, առաջին հերթին պիտի ըլլայ **հա–մա–պար–փակ**։ Այսինքն ան չի կրնար ունենալ այլ գլխաւոր յատկանիշ մը բացի համապարփակ ըլլալէ։ Մէկ քայլ անդին պիտի երթամ՝ ըսելու համար, որ հայ դպրոցի ամբողջ կրթական ծրագիրը միայն հայեցի կրնայ ըլլալ՝ ներառելով դասաւանդուող բոլոր նիւթերը, անոնք պետական պարտադիր ծրագրի մաս կազմեն թէ ոչ։ Այլ խօսքով, գոհացնելով հանդերձ ընդհանուր կրթութեան պահանջները, հայ դպրոցը պարտի ըլլալ **հայեցիութեան հնոցը**։

Ահա թէ ինչու նախ քան ծրագիր կազմելը անհրաժեշտ է սահմանել դպրոցին գոյութեան նպատակը, ճշտել նպատակակէտերը, ապա միայն ծրագիր մշակել, ծրագիր՝ որուն հիման վրայ ալ դասագիրքերը պիտի որոշուին, կամ պետութեան կողմէ որոշուած կամ առաջարկուած դասագիրքերը պիտի մեկնաբանուին ու գործածուին ըստ այդ ծրագրի պահանջներուն։

Արդարեւ, ի՞նչ կ’ակնկալուի հայ դպրոցէն։ Անշուշտ ամենէն առաջ ի՛նչ որ կ’ակնկալուի որեւէ դպրոցէ՝ ժամանակակից քաղաքակրթութեան լաւագոյն սկզբունքներուն համաձայն ուսում, **մա՛րդակերտում**, կերտումը ապագայ քաղաքացիին՝ իր ապրած երկրի կեանքին յարմարելու, գայն բարելաւելու եւ հոն, սեփական կեցութեան կազմակերպումով՝ իր պատուաբեր տեղը ունենալու հնարաւորութեամբ։ Այդ դաստիարակութեան անբաժանելի մասերը պիտի ըլլան ընտանիք կազմելու, հաւաքականութեան պատկանելու թէ բարոյական ու գեղադիտական հասկացութիւններ ձեռքբերելու ընդունակութիւնները եւ այլն։ Այս բոլորը իրենց տեղը պիտի գտնեն դասաւանդուող նիւթերուն ճամբով, ըլլան անոնք լեզուներ, գիտութիւն, ուսողութիւն, արուեստներ թէ մարմնամարզ։

Ինչ որ հայ դպրոցը պիտի զանազանէ այլ դպրոցներէ, սակայն, այդ ամենը ունենալէ անդին՝ հայեցի՝ կրթութիւնն է, **հա՛յակերտումը**, որ չի սահմանուէր կամ չի սահմանափակուէր հայերէնի, հայոց պատմութեան կամ հայ մշակոյթի ու կրօնի դասաւանդութեամբ միայն։ Անոնք գլխաւոր կռուաններն են այդ կրթութեան, սակայն ոչ բացառաբար։ Կրթական ծրագրի բոլոր միւս նիւթերը նոյնպէս առիթ են, դաշտ են, միջոց են սատարելու հայեցի կրթութեան՝ թէկուզ այլ լեզուով դասաւանդուած, թէկուզ հայութեան հետ երեւութապէս ո՛չ մէկ առնչութեամբ։

Դպրոցի առաքելութեան գիտակցումը միայն հայ ուսուցիչին ճիտին պարտքը չէ։ Բոլոր նիւթերը դասաւանդողներուն պարտաւորութիւնն է, այլեւ մանաւանդ տնօրէնութեան ու պատկան մարմիններուն։ Բայց այս մասին՝ Ուսուցիչ բաժնին մէջ։

Այստեղ պէտք է նաեւ շեշտել հայերէնով դասաւանդուող նիւթերու եւ այլ լեզուներով դասաւանդուող նիւթերու զուգահեռականութեան կարեւորութիւնը։ Բոլորը, հայերէն թէ այլ լեզուներով, հիմնուած պիտի ըլլան աշակերտին մտային նոյն մակարդակին ու զարգացման նոյն փուլին վրայ։ Անոր խօսելու, այսինքն՝ բանաւոր արտայայտութեան, կարգալու, այսինքն՝ ըմբռնողութեան եւ գրելու, այսինքն՝ գրաւոր արտայայտութեան կարողութիւնները պիտի մշակուին միասնաբար ու



հաւասարապէս բոլո՛ր լեզուներով, եւ այս պարագային հայերէնը պիտի հանդիսանայ յաւելեալ առաւելութիւն մը, յաւելեալ հարստացում մը, որմէ զուրկ պիտի ըլլան այլ վարժարաններ յաճախող ու հայերէն չգիտցող աշակերտները։ Ասիկա պիտի ըլլայ հայ վարժարանի մեծագոյն առաւելութիւններէն մէկը, նաեւ խայծերէն մէկը, ու ատոր շնորհիւ իր շրջանաւարտներու ուսման յաջորդ փուլերուն ցուցաբերած նուաճումները նախանձը պիտի շարժեն ոչ–հայ ուսանողներուն, որոնք պիտի ուզէին հա՛յ վարժարան յաճախած ըլլալ՝ այդ առաւելութիւններով օժտուած ըլլալու համար։

Աւելցնեմ, որ հայեցի դաստիարակութեան ծրագիրը ո՛չ որոշ բառերու թիւ է, որ շրջանաւարտը սորված պիտի ըլլայ, ո՛չ որոշ քերականական օրէնքներ, ո՛չ որոշ անուններ ու թուականներ, ո՛չ ալ նոյնիսկ որոշ ազգային կարեւոր նշանակութիւն ունեցող իրադարձութիւններ ու յօբելեաններ։ Այդ բոլորը՝ թերեւս, ի միջի այլոց։ Սակայն այդ բոլորէն անդին, այդ բոլորին իմաստ տուող՝ **հայ ըլլալու** ըմբռնո՛ւմը, եթէ կ’ուզէք՝ առհաւակա՛ն զգացումը եւ անխախտելի՛ յանձնառութիւնը, առանց որոնց մնացեալ ամեն ինչը կրնայ անհեթեթ թուիլ։

Ուրեմն, կրթական ծրագիրը պիտի ըլլայ համապարփակ, հիմնուած պիտի ըլլայ վարժարանի ընդհանուր առաքելութեան ու նպատակակէտերուն վրայ, հայերէն թէ այլ լեզուներով դասաւանդուող նիւթերը պիտի կազմեն գիրար լրացնող մէկ ամբողջութիւն։

Այս ծրագիրը կրնայ իր տարբերակները ունենալ երկրէ–երկիր, քաղաքէ–քաղաք թէ վարժարանէ–վարժարան, սակայն անոր պատրաստութեան սկզբունքներն ու հիմքերը կը մնան նոյնը։ Ասիկա իրագործելու համար պատասխանատու մարմինները պիտի գիտակցին, թէ անհրաժեշտ է սերտ համագործակցութիւն տեղական, շրջանային թէ համահայկական առումով, ու մանաւանդ կենսական նիւթական կռուաններու յատկացում։

ՎԻԷԺ-ԱՐՄԷՆ
(շաբ. 2)

Երբ Հայկական «Մուղամ»ը Կը Նուաճէ Թուրքիան

Տարիներէ ի վեր, հայ մշակոյթն ու մանաւանդ երգարուեստը քառասմ–բակ սլացքով կը թաւալին դէպի անդունդ, յետին շարտելով մեր դարաւոր գո–հարներն ու երաժշտական նուազագոյն օրինաչափութիւնները։ Իսկ թրքաբարոյ «մուղամ»ներն ու գլգլոցները հետզհետէ խորասոյգ կ’ըլլան հանրութեան են–թագիտակցութեան ու հոգիին մէջ, եղծանելով անոր ծիներն ու ճաշակը։ Ահա–զանգներն ու քննադատութիւնները որքան որ ալ դառն եւ անախորժ թուին ըլլալ՝ ամենեւին չեն գերազանցեր հայ արուեստին կրած տոյժերն ու վնասները։

Վերջերս, ընկերային ցանցերուն վրայ տարածուեցաւ տեսահոլովակ մը, որ մեծ խանդավառութիւն առթեց հայ ժողովուրդի կարգ մը խաւերուն, եւ այդ խանդավառութիւնը վերածուեցաւ հպարտութեան, գրաւելով անգամ հայկա–կան կարգ մը պատկերասփիւռներու կայաններ եւ ելեկտրոնային կայքեր։ Իսկ աւելի սարսափելին, երբ «պատկառելի» պատկերասփիւռի կայան մը հարցազ–րոյց կատարեց երգը կատարող «հերոս»ին հետ, գովերգելով անոր նուաճումը եւ ամբարտաւանօրէն նշելով, որ «հիթային» երգը միայն Թուրքիոյ մէջ ունե–ցած է 3 միլիոն դիտում եւ վերածուած «չալենճ»ի ու «հաշդեկ»ի։

Յո՞ւ երթաս հայ ժողովուրդ, յո՞ւ երթաս հայ մշակոյթ, յո՞ւ երթաս հայ եր–գարուեստ։

Այսքան տարի հայ մշակութային գոհարներն ու գլուխ գործոց երգար–ուեստը չկրցանք օտարներուն ընկալելի դարձնել, բայց մեր աղբը քանի մը շարթուան ընթացքին նուաճեց ամբողջ Թուրքիան։ Ըստ երեւոյթին, մեր «Շօ Պիզնեսի» աստղիկները այնպիսի մակարդակի մը հասցուցին իրենց երգացան–կը, որ թուրքերէն աւելի թրքաբարոյ դարձան, եւ թուրքեր իրենցը թողած մերը որդեգրեցին, որպէս աւելի հոգեհարազատ երգ եւ երաժշտութիւն։

Բայց աւելի վտանգաւորը՝ հայերուն բարձրացուցած յոխորտանքի ու հպարտութեան այլքն է որ կը մտահոգէ զիս։

««Զ» երգը դարձաւ «հիթային չալենճ» Թուրքիոյ մէջ, եւ յոյս ունինք որ նուաճէ ամբողջ Եւրոպան»։

ՔՐԻՍ ՏԱ ՓՈՐ ՄԻ ՔԱ ՅԷԼ ԵԱՆ

Այցելեցեք **hitunes.ca** կայքէջը եւ օրական 24 ժամ ունկնդրեցեք Սառա Եղիայեանի կողմէ ընտրուած հայկական երգերը

HITUNES.CA

Ունկնդրեցեք **triktrak.ca** կայքէջի հայկական համացանցային ռատիոժամի երգերը օրական 24 ժամ, իսկ ամէն հինգշաբթի երեկ. ժամը 8:00 - 9:00 լսեցեք շահեկան հարցազրոյցներ

TRIKTRAK.CA



ՀՕՄ-ի Մոնթրեալի ընկերային ծառայութեան գրասենեակը կ'աջակցի Գանատա ներգաղթած սուրիահայերուն

ՀՕՄ-ի Մոնթրեալի Ընկերային Ծառայութեան գրասենեակի հիմնական առաքելութիւնը Մեծն Մոնթրեալի հայութեան ընկերային կարիքներուն հասնիլն է, շեշտը դնելով կարիքաւոր անհատներու եւ ընտանիքներու վրայ։ Իսկ վերջին շրջանին մեծ աշխատանք կը տարուի Գանատա Նորահաստատ սուրիահայ ընտանիքներուն օգտակար հանդիսանալու համար։ Մեր գործունեութիւնը կ'ընդգրկէ տեղեկատուութիւն, ներգաղթողներու աջակցութիւն, տարեցներու եւ կարիքաւորներու օժանդակութիւն.

- Կ'օգնենք դիւրացնելու անոնց համարկումը (intégration) եւ երկրի օրէնքներուն, սովորութիւններուն եւ քաղաքացիական իրաւունքներուն ու պարտաւորութիւններուն ծանօթացումը։

- Կ'ամբողջացնենք կառավարական փաստաթուղթերը դաշնակցային եւ նահանգային մակարդակներու վրայ։ Allocation familiale, crédit d'impôt pour les nouveaux arrivants:

- Նորեկները կ'արձանագրենք ֆրանսերէսի դասընթացներու։

- Կ'ընկերակցինք զանազան ժամադրութիւններու եւ կը միջամտենք աշխատանք գտնելու կապակցութեամբ։

- Նոր ժամանած եւ տակալին Նոր հաստատուող ընտանիքներուն կը տրամադրենք խոհանոցային իրեր։

- La Corbeille գանատական բարեսիրական կազմակերպութեան հետ յատուկ համաձայնութեամբ գեղջուած գիներով ուտեստեղէն կ'ապահովենք կարիքաւոր ընտանիքներուն։

Դիւզաբթի օրերը ժամը 12:00Էս - 4:00
Դասը՝ 3401 Olivar Asselin, Montreal, Qc H4J 1L5
Դեռածայն՝ 514 514-335-2222

Դարձեալ «Խոստում» Ժապաւէնի Մասին

Այս օրերին հայաստանեան եւ սփիւռքի մամուլը բազմիցս անդրադարձան Հայոց ցեղասպանութեան մասին պատմող, ամերիկեան արտադրութեան «Խոստում» ժապաւէնին։ Մեզանում առկայ հետաքրքրութիւնը բնական է նախ այն պատճառով, որ ազգային զգայուն թեմայով ստեղծուել է հերթական ժապաւէնը եւ ի հարկէ ունենք այն ակնկալիքը, թէ հոլիվուտեան արտադրութեան եւ համապատասխան «փայլ» ունեցող ժապաւէնը կարող է նպաստել աշխարհում Հայոց ցեղասպանութեան թեմայի քարոզչութեանը։

Անդրադառնանք բուն ժապաւէնին։

Սա այն դէպքն է, երբ կարելի է հաստատել յայտնի ճշմարտութիւնը, թէ ներդրուած միջոցները երաշխաւորել են յաջողութեան կէսը։ Դիտողի համար ակնառու է, որ ժապաւէնի արտադրութեան վրայ շօշափելի գումար է ծախսուել, ինչն ապահովել է պատկերների «հարուստ» լինելը եւ միւս կողմից ապահովել է լայնածաւալ տեսարանների, անհրաժեշտ պատմական միջավայրի հաւաստիութիւնը։ Իսկապէս իրական են թուում Պոլիս մայրաքաղաքն իր ասիա–եւրոպական բազմազանութեամբ, գաւառական համայնապատկերը, ինչպէս եւ՝ զանգուածային տեսարաններն իրենց համոզչականութեամբ ու ազդեցիկութեամբ։

Այստեղ ցանկանում եմ շեշտել մէկ ոչ անկարեւոր հանգամանք։ Ժապաւէնը դիտելուց առաջ այն մտաւախութիւնն ունէի, որ կերպարները, առարկաներն ու միջավայրը կարող են վատ նմանեցուած լինել, աւելի շուտ՝ ունենալ էքզոթիք ու էքլեքթիք պատկեր։ Ինչի ակնդիրն ենք յաճախ դառնում հոլիվուտեան արտադրութեան, այս կամ այն ժանրի, ժապաւէն դիտելով։ Պէտք է փաստել, որ ժապաւէնի հեղինակները կատարել են մանրակրկիտ ու բարեխիղճ աշխատանք, ինչի արդիւնքում իրական են դիտւում եւ հայերի կերպարները եւ թուրքերը իրենց դիմապատկերներով, հագուստով, խառնուածքով, կենցաղային միջավայրով եւ ինչպէս ակնարկուեց վերեւում, ճշմարտանման է ու համոզիչ՝ ընդհանուր միջավայրը։ Անգամ հերոսների մաշկի իւրայատուկ թոււի գոյնը ճիշդ է արտայայտուած, եւ այս բոլորը վկայում են, որ պատասխանատուութեամբ են իրենց առջեւ դրուած նպատակին մօտեցել շարժապատկերն ստեղծող բեմագիրը, բեմադրիչը, նկարիչները, ի հարկէ նաեւ միւսները։

Ժապաւէնը դիտելուց յետոյ ականյայտ է դառնում նաեւ, որ հեղինակները կամ գուցէ պատուիրատու անձը մի շարք հարցադրումներ են ցանկացել ներկայացնել ժապաւէնում, այդ պատճառով ընդգրկուոն ասելիքի ներառած տարբեր գաղափարներ առանձին դրուագների ձեւով հազիւ ակնարկւում են ժամանակային սահմանափակ տարածութեան մէջ։

Ի հարկէ որոշ երեւոյթներ միտումնաւոր կերպով ընդամէնը ակնարկւում են, քանի որ ականյայտօրէն խնդիրն այդպէս է դրուել։

Ասուածի մէկ օրինակը Ա. Աշխարհամարտի նախապակին եւ ընթացքում երիտթուրքերի կողքին գերմանացի զինւորականութեան (բնականաբար՝ որպէս այդ երկրի պաշտօնական կեցուածքն արտայայտող ներկայացուցիչների) կանգնած լինելն էր։ Ի հարկէ գաղտնիք չէ այն փաստը, որ երիտթուրքերը վայելում էին Գերմանիայի հովանաւորութիւնը, սակայն այս դէպքում արդարացիօրէն անհարկի է համարուել ժապաւէնում այս թեմայի զարգացումը։

Յաջորդ ակնարկը թուրքական բարձրաստիճան ընտանիքի գաւակի հայանպաստ արարքներն էին, որոնց հա-

մար իւրայինները գնդակահարում են նրան։

Իրապէս ժամանակագրութեան կողմից արձանագրուած այսպիսի մի փաստ ժապաւէն բերելը եթէ աւելորդ չէ, ապա աւելորդ կը լինէր դրա ուռճացումը։

Այստեղ մի փոքր շեղուելով՝ արժէ արձանագրել, որ վերջին տարիներին, նաեւ՝ ոչ առանց այլոց խրախուսիչ ձայնակցումի, մեզանում թշնամիների մէջ «եղբայրներ» յայտնաբերելու եւ նրանց արարքները տարփողելու, սրա խորապատկերի վրայ ինչ–ինչ սեփական մեղքեր «յայտնագործելու» հիւանդագին «հումանիզմ» է ի յայտ եկել։ Խօսքը վերաբերում է, թէ՛ Ցեղասպանութեան շրջանին, թէ՛ հայ–ազրպէյճանական յարաբերութիւններին եւ թէ՛ նաեւ պատմական որոշ այլ դրուագների։ Իրականութիւնն այն է, որ թշնամու «հայասէր» կամ «արդար» ներկայացուցիչների առանձին արարքները բացառիկ պարագաներ են, երբեք իրադարձութիւնների վրայ մեծ ազդեցութիւն չեն ունեցել եւ «շրջահայեաց» ու «մարդասէր» խաղալու, գոհի ու դահիճի միջեւ հաւասարութեան եզրեր փնտռելու, յանցագործութիւնները պատմական դէպքերի գուգադրմամբ արդարացնելու ոչ մի պատճառ չուենեք, եթէ անգամ դրա համար ինչ–որ մէկը խրախուսաբար կը թփթփացնի ուսերիս կամ այս կամ այն միջոցառման ժամանակ ինչ–որ մրցանակ կը տան։ Մեզ կոտորել են, մեր երկիրն ու ունեցուածքը մեզանից խլել են, եւ մենք բոլոր տեսակի իրաւունքներ ունենք ամէն գնով ֆիզիքական ու բարոյական հատուցման հասնելու։

Ժապաւէնն առհասարակ օժտուած է ասելիքի զսպուածութեամբ եւ չափաւորութեամբ, ինչը վերջինիս առաւելութիւններից է։ Մասնաւորապէս նկատի ունեմ ջարդերի տեսարանները, մարդկային ողբերգական ճակատագրերի պատկերումը, որոնք ի հարկէ տակնուվրայ են անում հանդիսականին, բայց նախճիրի սահմուկեցուցիչ դրուագներով չեն տրորում հոգիդ եւ ազգային արժանապատուութիւնդ։

Վերադառնալով ժապաւէնի ակնարկների թեմային՝ նշեմ դրանցից մի քանիսը։

Հանդիսականի աչքերի առջեւ պատկերւում է Պոլսոյ մեծահարուստների անհոգ կեանքն ու եղբայրութիւնը թուրք մեծամեծերի հետ։ Իրականում այս մարդիկ կարծում էին, թէ ճիշդը լուելն ու համակերպուելն է՝ հաւատալով եւ հաւատացնելով, թէ թուրքական «զայրոյթի» այս ալիքն էլ կ'անցնի։ Եւ հայ յեղափոխական ըմբոստացումներին նիւթական ու այլ միջոցներով օգտակար լինելու փոխարէն՝ քննադատում էին դրանք։ Տրամաբանական էր, որ Ցեղասպանութիւնը նրանց էլ չէր խնայելու։ Անգամ եթէ վերջիններս մոռացութեան տալին սեփական ինքնութիւնը, այդ մասին թշնամին էր յիշեցնելու։ Այդպէս եղել է այն ժամանակ, եղել է Պաքւում ու Սոււկայիթում, այդպէս լինելու է միշտ։ Լաւ կը լինի, որ այս մասին չմոռանան նաեւ թուրքական որջում այսօր բախտ ու բարեկեցութիւն փնտռող մեր հայրենակիցները։

Ժապաւէնում այս թեման այս խորութեանը չի հասնում ի հարկէ, սակայն այդ «եղբայրութեան ակնարկը», եւ հետեւանքները, ինչպէս ասուեց, ներկայացուած են։

Շահեկան մօտեցում է, շարժապատկերի մէջ այն օրերի ամերիկեան դեսպան Հենրի Մորկենթաուի կերպարի ընդգրկումը։ Կարեւոր է, որ ամերիկացի ու ոչ միայն ամերիկացի հանդիսականին հէնց Միացեալ Նահանգների դեսպանի շրթներով է փոխանցւում, որ թուրքերի



կողմից իրականացուողը կանխամտածուած ջարդեր են եղել եւ մէկ ժողովրդի ոչնչացման ծրագիր։ Այս դրուագը փաստագրութեան ուժ ունի, քանի–որ համապատասխանում է իրականութեանը։ Մարդասէր ու հայասէր Մորկենթաուի թողած փաստաթղթերն ու յուշագրութիւնները այսօր էլ թուրքական վայրագութիւնների մասին վկայող արժէքաւոր նիւթ են։ Նոյն իմաստով կարեւոր է նաեւ գլխաւոր հերոսներից մէկի՝ ամերիկացի լրագրողի կերպարը։ Մարդ, որի համար գուցէ նախապէս շատ տարբեր չեն եղել հայն ու թուրքը, բայց որի աչքերի առջեւ ծաւալւում են դաժան իրողութիւններ։ Ճշմարտութիւնը փաստելու համար նա մեկնում է գաւառներ ու գիւղեր, վկան է դառնում ջարդերի տեսարանների եւ կարողանում է բացայայտել թուրքական սուտը։ Սա եւս կարեւոր շեշտադրում է ժապաւէնում, քանի որ, ինչպէս գիտենք, այսօր եւս տիրապետող թուրքական պաշտօնական կեղծիքի համաձայն, պատերազմական իրողութիւնների թեւադրանքով, իբր թէ տեղի է ունեցել բնակչութեան տեղահանութիւն, որի ժամանակ էլ արձանագրուել են մեծաթիւ մահացութեան դէպքեր։ Լրագրողի այս կերպարը նոյնպէս հաւաստի է ընկալւում, որովհետեւ իրականում եղել են լրագրողներ, որոնց թղթակցութիւններն օրը–օրին, իրազեկ աղբիւրներ որպէս, տեղեկութիւններ են փոխանցել եւրոպական ու ամերիկեան մամուլին։

Կարեւոր շեշտադրում է, այն որ ժապաւէնի եզրափակիչ հատուածում հայութեան բեկորները խմբուելով ըմբոստանում են՝ կազմակերպելով ինքնապաշտպանութիւն։ Ժապաւէնի հեղինակները արդարացիօրէն անհրաժեշտ են համարել շեշտել, որ հայ ժողովուրդը ստրկական խոնարհութեամբ չի գնացել կառափնարան, այլ նաեւ տարբեր վայրերում ըմբոստացել է եւ ըմբոստանալով՝ փրկութիւն է գտել։ Ժապաւէնի եզրափակիչ հատուածում իրադարձութիւնների զարգացումը ականյայտօրէն յիշեցնում է Մուսա Լերան ինքնապաշտպանութիւնը։ Ի հարկէ այստեղ պատմական իրադարձութիւնների շարադրում պէտք չէ փնտռել, բայց նմանեցնելու մօտեցումն արդարացուած է, որովհետեւ մեզ ներկայացուողը գեղարուեստական՝ ոչ փաստագրական, ժապաւէն է։

Կարեւոր է այն ուղերձը, որ հնչում է գլխաւոր հերոսուհի Աննայի շուրթերից. «Մենք պէտք է յաղթենք ապրեւով»։ Եւ պայքարելու գնով ազատուողները ապրելով յաղթում են թշնամուն, յաղթում են Ցեղասպանութեան ծրագրին, յաղթում են ազգովի բնաջինջ լինելու ճակատագրին։

Ժապաւէնում մէկ կարեւոր շեշտադրում էլ կատարւում է՝ ներկայացնելով թուրքական այն միջավայրը, ուր ուռճանում է հայութեանը բնաջնջելու ծրագիրն ու համոզումը, ատելութիւնն

ու անհանդուժողութիւնը երէկուայ դրացու ու բարեկամի հանդէպ։ Ինչպէս այդ տրամադրութիւնները իջնում են փողոց՝ ծնելով այն մոլեռանդ խուժանին, որը թրքական ազգայնամոլութեամբ արբած պատրաստ է բռնանալու, սպանելու եւ կողոպտելու։

Ժապաւէնի դերակատարները, որոնցից շատերը յայտնի դերասաններ են, խաղում են լաւ եւ համոզիչ։ Ներկայացուած հայերը գեղեցիկ, արժանապատիւ ու ազնիւ մարդիկ են։

Ի դէմս թուրքերի կերպարների ներկայացցուած են մարդիկ, ովքեր վարակուած են ազգայնամոլութեան ու այլատեսացութեան մոլադարութեամբ եւ հաստատակամ են երէկուայ մերձաւորներին ոչնչացնելու նրանց ունեցուածքին տիրանալու մոլագար կրքով։

Ժապաւէնի առանցքում յուզիչ սիրային եռանկիւնի է, որի հանգուցալուծումը տեղի է ունենում ոչ թէ գործող հերոսների վճիռներով, այլ դաժան ու ամենակուլ բնաջնջման մեքենայի կողմից։

Ցեղասպանութեան ողբերգական պատմութիւնը ժապաւէնում հիւսուած է պարզ մարդկային ճակատագրերի վրայ։ Ամենայն հաւանականութեամբ նման խնդիր է առաջադրել ժապաւէնի գաղափարի հեղինակ եւ արտադրիչ Քրքըրեանը։ Միայն շնորհակալ կարելի է լինել նրան մահուանից առաջ եւս մէկ բարի ու հայնապաստ նախաձեռնութիւն կեանքի կոչելու համար։

Ժապաւէնը դիտելուց յետոյ այնուամենայնիւ մէկ հարց է ծնւում մտքումդ. այն՝ ինչ հետաքրքիր է մեզ համար, որովհետեւ մեր ազգային կենսագրութեան առանցքում է, արդեօք հետաքրքիր կը լինի նաեւ օտարների համար։ Այն նկատառումով ի հարկէ, որ ժապաւէնը կարողանայ իրականացնել քարոզչական առաքելութիւնը։

Եւ վերջին միտքը՝ Ցեղասպանութեան մասին հերթական ժապաւէնը դիտելուց յետոյ։ Այս ժապաւէնը եւս ասել է այնքան, ինչքան ցանկացել է ասել, սակայն պէտք է մտածել մեծ կտաւի փաստագրական–գեղարուեստական ժապաւէնի մասին։ Ժապաւէն, որը վաւերագրական ճշգրտութեամբ կը ներկայացնի Ցեղասպանութեան պատկերն ու հետեւանքները, կը դառնայ քաղաքական փաստաթուղթ, կը մերկացնի թուրքական կեղծիքը եւ կը բացայայտի այլեւս անվիճելի ճշմարտութիւնը։ Ի հարկէ քաղաքական լուրջ ակնկալիքը պարտադիր չէ, որ կապուի գեղարուեստական ստեղծագործութեան հետ, բայց եւ ցանկալի է՝ նկատի ունենալով շարժապատկերի արուեստի քարոզչական մեծ ուժը։

Ինչը շատ լաւ հասկացել եւ փորձել են անել ուրիշները։ Վստահաբար ինչի դիտակցումից էլ ծնուել է «Խոստում» ժապաւէնը։

ԱՐՏԱԹԷՍ ԾԱՀՊԱԶԵԱՆ

ՈՒՆՏԻՆ ՏԱՊԱՆԱԿԸ ԿԻՒԼԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՍԻՍԷ ԱՆԹՈՒԽԱՍ ՓՈԽԱդրութիւնը

«ԲԱՐԵԲԱՍՍՏԻԿ ԹՈՒԱ-ԿԱՆ»ԷՆ ԿԻՒԼԿԻՈՅ ԱՂԷՏԸ

Օսմանեան Կայսրութեան սահմանները արդէն երկու դարէ «անընդհատական կրճատում»ի մէջ էին, հարուածներուն տակ՝ «երկրին գլխէն, ոտքէն, կողերէն, չորս դիէն»⁴³⁴։ Եւ այն կրճատումը հասած էր Մակեդոնիա, ուր տազնապը ծայրայեղ բորբոքած էր։

Պետութիւններու, մասնաւորապէս Անգլիոյ եւ Ռուսիոյ միջամտութիւնները յանկարծ բուռն կերպարանք էին առած, եւ հորիզոնին վրայ կը նշմարուէր Մալեդոնիոյ անջատման եւ Թուրքիոյ նոր անդամահատման հեռանկարը ⁴³⁵։

Կայսրութիւնը վերջնական անկումէ ազատելու համար՝ Փարիզի խորհրդաժողովին որոշումները արագօրէն տարածուած էին սպաներու եւ ուսեալ ու մտաւորական շրջանակներու մէջ՝ «ցանկալի տպաւորութիւն» ձգելով, մանաւանդ՝ խորհրդաժողովին վճիռը. գահընկեցութիւն Սուլթան Համիտի ⁴³⁶։

Փարիզեան խորհրդաժողովէն քանի մը ամիս անցած էր, երբ Մակեդոնիոյ թուրք բանակը ապստամբութեան դրօշը պարզեց եւ քայեց Կ. Պոլսոյ վրայ։ Սուլթանը պարտաւորուած՝ «անուշ ժպիտով» Միթհատեան Սահմանադրութիւնը հռչակեց եւ ուխտեց հաւատարիմ մնալ անոր ⁴³⁷։

Ապստամբութիւնը յաղթական էր։ Իթթիհատը՝ իշխանութեան գլուխ։ Եւ Օսմանեան Կայսրութիւնը դարձած էր Սահմանադրական միապետութիւն մը։ Երիտասարդ Թուրքերը հրաժարած էին սուլթանը գահնկեց ընելու վճիռէն ⁴³⁸։ Քիչ անց ալ՝ կը հրապարակէին քաղաքական իրենց ծրագիրը, որ գրեթէ կը կրկնէր Միթհատի գաղափարները։ Անոր մէջ կը նշուէր, թէ սուլթանը ծայրագոյն խալիֆն է Կայսրութեան, թէ ան ենթակայ չէ պատասխանատուութեան ու անձեռնմխելի է ⁴³⁹։ Իսկ քաղաքացիներն ալ առանց խտրութեան օսմանցիներ են ⁴⁴⁰։ Տասնամեակներու մեծագոյն տառապանքին, մարտնչումին, գոհաբերումին «օրհնեալ արգասիք»ը ա՛յս էր ⁴⁴¹։

Սահմանադրութեան վերահաստատման առաջին օրերուն՝ «տարբերութիւն չէր մնացած ոչ ոքի միջեւ. ամէն դասակարգի, ամէն սեռի, ամէն հասակի, դիրքի ու պաշտօնի անձնաւորութիւն հարբած մոդական հուրիէթ, ատալաթ, մուսավաթ խօսքերէն՝ իր զգացմունքը թափելու պարտականութեան մէջ կը գտնուէր. մին պարելով, միւսը՝ լալով, մին գոռալով, միւսը՝ հրացան պարպելով, ոմանք ճառելով, ոմանք գինիի եւ օղիի սրուակները ձեռին փողոցները շրջագայելով եւ հարայ-հռոց հանելով։ Երկիրը աւելի շատ խենթանոցի էր նման», ինչպէս նկարագրած է Ռուբէն Տէր Մինասեան ⁴⁴²։

Ահա կը յայտարարուէր. «Այլեւս չկայ թուրքի, հայու, յոյնի եւ հրէի տարբերութիւն. ամէնքս ալ մէկ եղբայր ենք, ամէնքս ալ մէկ հայրենիքի կը ծառայենք, ամէնքս ալ մէկ դրօշի ներքեւ կը գտնուինք»⁴⁴³։ Ամէնքն ալ Օսմանցի էին... Ու ի շարս այլոց կը գրուէր նաեւ այս ոտանաւորը․ «Եղբայր ենք մենք, մէ՛կ սիրտ, մէ՛կ կամք, մէ՛կ հոգի․ / Մեր սիրոյն մէջ տեղի չենք տար ո՛չ ոքի։ / Խաղաղութեան զըրօշին տակ լուսափառ, / Ունինք մենք նո՛յն զգացում, պահանջ ու բարբառ։ / — ՕՍՄԱՆՑԻ՛․ / Ա՛յս մեր անունն, որուն աշխարհ նախանձի»⁴⁴⁴։

Մինչ Կայսրութեան փոքրամասնութիւնները եւ անոնց մէջ հայերը տակաւին հարբած էին, Իթթիհատի «Թան» պարբերականը պիտի գրէր. «Թուրքեր իրենց աշխարհակալի հանգամանքով՝ ունին որոշ իրաւունքներ եւ մենաշնորհներ. կարիք չկայ միւս ցեղերուն համար

ճանչնալ նոյն քաղաքական հաւասարութիւնը»⁴⁴⁵։

Վարանդեան գրած է, թէ Իթթիհատը իւրացուցեր էր վատթարագոյն ազգայնամոլութեան հաւատամբը եւ կը ձգտէր ձուլել բոլոր ցեղերը օսմանցիութեան մէջ, ստեղծել օսմանեան Կայսրութենէն ոչ միայն մէկ պետութիւն, այլեւ մէկ ազգ — օսմանեան ազգը ⁴⁴⁶։

Անիկա կուսակցական բռնատիրութիւն էր հաստատած։ Սուլթանին ձեռքերը կարճուցած, եւ վարչական բարձր պաշտօններու վրայ նշանակած իր կուսակցութեան անդամները։ Գաւառներու կուսակալներ, միւթէսարքֆներ եւ գայմագամներ՝ մեծամասնութեամբ իր անդամներն էին։ Մարդիկ փութացած էին իթթիհատական ըլլալ՝ պաշտօններ ձեռք ձգելու համար։ Կարեւոր քաղաքներու մէջ «թունաւոր սուռնկի նման» բուսած էին իթթիհատական ակումբներ ⁴⁴⁷։ Ըստ Ռուբէնի, Իթթիհատը ժողովրդական յենարան ունենալու համար խրախուսած էր իր շարքերուն մէջ մուտքը այն տարրերուն, որոնք ազդեցիկ էին, հարուստ էին, ֆիզիքապէս ոյժ ունէին եւ կը ձգտէին պետութեան ճամբով իրենց շահատակութիւնները ի գործ դնելու։ Այս տարրերէն կազմուած էին Իթթիհատի կոմիտէները ⁴⁴⁸, որոնք շատ շուտ վոհմակներու փոխուած էին։

Միսաք Գօշուեանն Սահմանադրական վոհմակներուն ի տես՝ իր յուսախաբութիւնը յայտնած է, ըսելով թէ՛ նոր լոգունգը պահ մը յոյս ներշնչեց գիւղացիին եւ քաղաքացիին, որ հին վարչակարգը պիտի ջնջուի, հարուածողները, հարստահարողները կորաքամակ պիտի մնան եւ երկրին ծառայելու կամք ու կոչում ունեցող ուղղամիտ ու արդարագատ քաղաքացիներ միայն պիտի ստանձնեն վարչութիւնը։ Սակայն դարձալ «հին անսիրտ կեղեքողներ, ու արիւն ծծողներ»ը (ասոր ներքեւ դժուար չէ հասկնալ՝ հին անսրտութեան, կեղեքողականութեան եւ արիւնկզակութեան ոգիով նորերը) կը տիրապետեն ⁴⁴⁹։

Իթթիհատի իշխանութեան առաջին 8–9 ամիսները յատկանշուեցան պաղ անտարբերութեամբ մը՝ դէպի ոչ–թուրք ազգերու կենսական պահանջները ⁴⁵⁰։ Այս պաղ անտարբերութիւնը «միևնոե–րալթեան սիսթեմ» պիտի կոչէր Երուանդ Սրմաքէշխանլեան։ Ահա թէ ինչպէս. «Ա՛խ, այդ սարսափելի միները, որ տարիներով իր տակը առած ճգմած է միլիոնաւոր ժողովուրդներ ամէն ցեղէ եւ կրօնքէ, իսլամը եւ ոչ–իսլամը հաւասարապէս (...) Համիտի օրով, միներալթեան սիսթեմը իր իտէալ կատարելութեան հասաւ։ Չարիքին մեծ վարպետը (...) իր ամենէն յետին պաշտօնեային իսկ տուաւ լաւագոյն միներները, որոնց վրայ երբեք նստած ըլլային այդքան հանգստաւէտօրէն Օսմանեան Կայսրութեան բոլոր մեծ ու պզտիկ պաշտօնատարները (...) սահմանադրական ռեժիմին հաստատու–մէն յետոյ՝ միներալթեան դրութիւնը ի սպառ քանդուեցաւ[՞]։ Ո՛չ, դժբախտաբար (...) միներեր ալթըրի մահաբեր դրութիւնը դեռ լայնօրէն կը թագաւորէ այս երկրին մեծագոյն մասին մէջ»⁴⁵¹։

Այս միջոցին սուլթանը երկու ջուրերու մէջ կը լողար. մէկ կողմէ Սահմանադրասէր էր, միւս կողմէ՝ սատանայա–կան միջոցներ կ’որոճար՝ այս անգամ եւս տապալելու ստիպողաբար վերահաստա–տածը։

Ան գաղտնօրէն ստեղծեց կրօնամոլ «Մուհամմէտիէ» կուսակցութիւնը, ուր հաւաքուեցան նախկին փաշաներ, պէյեր, պաշտօնագուրկ լրտեսներ, զինուորա–կաններ, եւ այլք՝ որոնք կրցած էին պահել իրենց դիրքերը՝ զիրենք փոխարի–նողներու պակասին հետեւանքով ⁴⁵²։ Ան իր կողքին ունէր նաեւ մոլլաները ⁴⁵³։

Սուլթանը ամիսներ ուսումնասի–րեց եւ կազմակերպեց յեղաշրջումը, որ 31 Մարտին պիտի փորձուէր ⁴⁵⁴։ Իթթիհատականները դուրս քշուեցան կառա–նակ մը միահեծանութիւն վայելեց։ Շուտով սակայն գահնկեց եղաւ եւ քսորուեցաւ Թեսաղոնիկէ, ուր տարիներ յե–տոյ մեռաւ «այդ ծնեալ ոճրագործը»⁴⁵⁵։

Անոր քսորը փրկութիւն մը չեղաւ, քանի իրավիճակը այնպիսին էր, որ կանխաւ տեսնուեցաւ թէ՛ «նորէն մարդ պիտի խղիխողեն այս երկրին մէջ»⁴⁵⁶։

ԳԱՌՆԻԿ Աւ. Ք. Գ.

ԱՂԲԻՒՐՆԵՐ Եւ ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

434.– Երուանդ Սրմաքէշխանլեան, Փոքր Ասիոյ Մէջէն, Ժամանակի Մատե–նաշար քիւ 2, խմբ. Սեւան Տէյիքմէնե–եան, Իսթանպուլ, 2015, է 165, ՄՓԱ.։

435.– ՎԴՊ2, է 7։

436.– Անդ։

437.– Անդ։

438.– Իթթիհատը գաղտնի որոշում առած էր, որ Կ. Պոլսոյ գրաւումէն ետք՝ սուլթանը պիտի մնար

գահին վրայ։ Այս որոշումը գաղտնի պիտի մնար Սահմանադրու–թեան հռչակումէն ետքն ալ։ Իթթիհա–տակաւները ամէն կողմ լծուած էին փարզաքշաւի, թէ սուլթանը փոխուած է, այլեւս նախկին միապետը չէ, թէ իր անուան կապուած ոնիրներուն եւ անի–րաւութիւններուն պատասխանատուու–թիւնը իր շրջապատինն էր, եւ ոչ թէ իրը։ Ինչպէս ցոյց տրուած է, Իթթիհա–տականները շատ աւելի թաքուն պատ–նառներ ունէին սուլթանը գահին վրայ

պահելու։ Ահմէտ Ռեզա, որ ցկեանս երեսփոխանական ժողովի նախագահ ընտրուած էր, ըսած է. «Համիտ իմ ձեռքերուս մէջ հլու գործիք մը պէտք է ըլլայ. մեքմ մեր ուզածին պէս գայն կրնանք գործածել գահընկեցութեան սպառնալիքին տակ», ԵՀԲ, է 663։

439.– Կ. Զ. Թառոյեան, Երիտ–թուրքերի Խարդավանքները Հայ Ազա–տագրական Զգտումների Դէմ, Լրաբեր, քիւ 1, 2005, է 213։

440.– Անդ։

441.– Ռուբէն Զարդարեան, Ող–ջոյն Խորհրդարանին, Ժկ, 5 Դեկտեմ–բեր, 1908, է 1։

442.– Ռուբէն, Հայ Յեղափոխա–կանի Մը Յիշատակները, հտ 5, Բ. հրտ, Պէյրութ, 1977, է 12, ՌՅՅ։

443.– Գոհաբանական Մաղթանք Մայր Եկեղեցւոյ Մէջ, Բն, 17 Յուլիս, 1908, է 3։

444.– Աղեքսանդր Փանոսեան, Օսմանցի, Բիւզանդիոն, 19 Յուլիս, 1908, է 1։

445.– ԵՀԲ, է 663։

446.– ՎԴՊ2, է 14։

447.– ԵՀԲ, է 665։

448.– ՌՅՅ, է 90։

449.– Միսաք Գօշուեան, Օրուան Մտածումներ (1908–1913), Ժամանակի Մատենաշար քիւ 1, խմբ. Սեւան Տէյիք–մէննեան, Իսթանպուլ, 2014, է 46, ԳՕՄ։

450.– ՎԴՊ2, է 14։

451.– ՄՓԱ, էէ 136–137։

452.– ԵՀԲ, է 680։

453.– Ն, է 679։

454.– Ն, է 680։

455.– ՎԴՊ2, է 15։

456.– ՄՓԱ, է 91։

Ascenseur

Adams

Elevator

Services Inc.

PO Box 30, St-Laurent, Qc. H4L 4V4

RBQ# 1812-6474-22

www.adamselevator.ca

TEL: 514-745-4455 - FAX: 514-745-6613

RENOVATION, REPAIRS, MAINTENANCE,
INSTALLATION OF ELEVATORS.

Eddie, Pedro, Joyce Oughourlian

Ընկճուածութիւն-Ընկճախտ-Depression

Ընկճուածութիւնը կամ ընկճախտը յաճախակիօրէն տեսնուած հոգեբանական հիւանդութիւն մըն է, որ կը յատկանշուի անտարբերութեամբ (apathy) եւ անտրամադրութեամբ: Անիկա կ'ազդէ անհատին մտածողութեան, վարք ու բարքին եւ զգացումներուն: Անիկա դարձանելի հիւանդութիւն մըն է: Զգարմանուելու պարագային կը դառնայ վտանգաւոր:

Ընկճախտը կ'ունենայ զանազան պատճառներ, մասնաւորապէս՝ երկարատեւ հիւանդութիւններ, մահացու եւ անդարձանելի հիւանդութիւններ, ինչպէս նաեւ քաղցկեղային հիւանդութիւններ:

Մնայուն եւ երկարատեւ ցաւ, անքնութիւն, քնանալու դժուարութիւն, ուղեղային անօթային խցումներ, ուղեղային դանդաղում, ուղեղային կաթուած, շաքարախտ, արեան բարձր ճնշում, սրկարէթի գործածութիւն, տեսողութեան եւ լսողութեան տկարացում, քունի շնչադադար, սեռային եւ ֆիզիքական կարողութեան տկարացում, դաշտանադադար, մոռացկոտութիւն, անհատականութեան փոփոխութիւն, խորականութեան ենթարկուիլ, մեկուսացում, ամուսնալուծում, կողակիցի եւ հարազատի կորուստ, նրկական-տնտեսական դժուարութիւններ, անգործութիւն, գործի ձախողութիւն եւ գերաշխատանք,- բոլորը պատճառներ եւ վտանգաւոր ազդակներ են ընկճախտի: Կարգ մը դեղեր, որոնք անձկութեան դէմ կը գործածուին նոյնպէս պատճառ կրնան դառնալ ընկճուածութեան

Տարեցները, մանաւանդ կիները, աւելի հակամէտ են ունենալու ընկճախտ: Անիկա առաւել չափով կը պատահի 65 տարեքէն ետք, որովհետեւ ատ-


կէ ետք է, որ մարդիկ աւելի շատ կը հիւանդանան եւ կ'ունենան վերոյիշեալ հիւանդութիւններէն մէկը կամ միւսը: 65 տարեկանէն ետք շատեր կ'ունենան ոչ-յստակ ընկճուածութիւն եւ միաժամանակ կ'ըլլան անհանդարտ, չեն կրնար կատարել ամէնօրեայ սովորական ընթացիկ գործերը եւ կ'ունենան ընկերային փոխյարաբերութեան խախտում ու անբնական յարաբերութիւն:

Ընկճախտը տարեցութեան մէկ երեսը չէ: Տարեցներ, որոնք կեանքը կը վայելեն զբաղումներով, գոհունակութեամբ եւ ուրախութեամբ, դժուար թէ ընկճախտէ տառապին:

Ուսումնասիրութիւններ ցոյց տուած են, որ 65 տարեկանէն ետք տղամարդոց 2.7 տոկոսը եւ կիներուն 4.5 տոկոսը կ'ունենան ընկճուածութիւն: Այդ տարեքէն ետք 100,000 ընկճախտէ տառապողներուն 11-14ը կը դիմեն անձնասպանութեան, սակայն մեծամասնութիւնը կը ձախողին, այսինքն չեն մահանար: Երիտասարդ պարագաներուն 200 անձնասպանութեան դիմողներէն միայն մէկը կը մահանայ: Կիներ աւելի շատ ընկճուածութիւն կ'ունենան, աւելի շատ անձնասպանութեան կը դիմեն, սակայն տղամարդիկ, որոնք անձնասպանութեան կը դիմեն շատ աւելի մեծ համամտութեամբ կը յաջողին:

Յաճախ ընկճուածութիւնը առաջին ախտանշանն է ուղեղային կաթուածի եւ մնայուն մոռացկոտութեան: Ընկճախտ ունեցող անհատը աւելի շատ հաւանականութիւնը ունի Ալզհայմերի հիւանդութիւն (Alzheimer's disease) ունենալու:

Ընկճախտը կ'ըլլայ մեղմ կամ զորաւոր եւ անցողակի կամ մնայուն: Անի-



կա առաւելաբար կը յայտնուի ձմրան: Անոր հետ մէկտեղ կրնայ պատահիլ զգայախաբուրթիւն (hallucination) եւ մտազարուրթիւն (delusion):

Ընկճախտէ տառապող տարեցներ կ'ունենան հետեւեալ ախտանշաններ՝ զրգռուածութիւն, չփոթութիւն, շուարած վիճակ, անհանդարտութիւն, անձկութիւն, յիշողութեան տկարացում, դժուար կեդրոնացում, հետաքրքրութեան պակաս, յոգնած վիճակ, ֆիզիքական տկարութիւն, դանդաղ շարժումներ եւ խօսակցութիւն, կեդրոնացումի պակաս, յիշողութեան տկարացում, որոշում տալու դժուարութիւն, քունի փոփոխութիւն, քնանալու դժուարութիւն, ախորժակի փոփոխութիւն, ցաւի դանդաղանք, գլխացաւ, նոդկանք, ստամոքսի ցաւ եւ անձնասպանութեան հակամէտութիւն: Անոնք կը հրաժարին հաճոյքներէ, ընկերներէ եւ անմիջական հարազատներէ: Տղամարդիկ կը ձեռնարկեն վտանգաւոր աշխատանքներու, կ'աշխատին անուշադրութեամբ եւ երկար ժամեր կ'անցը-

նեն հեռատեսիլ դիտելով ու մարզանքներ ընելով:

Ընկճախտը կ'ախտաճանաչուի երբ վերոյիշեալ ախտանշաններէն 15ը ներկայ ըլլան 10 օրէ աւելի տեւողութեամբ:

Ընկճախտը, ինչպէս յիշեցինք նախապէս, դարձանելի է: Պէտք է պաշտպանել ուղեղը, բարելաւել ուղեղին աշխատանքը, ունենալ առողջ սննդականոն, կատարել կանոնաւոր մարզանքներ, ունենալ ընկերային կեանք եւ միտքի աշխատանք-մարզանք, ինչպէս նաեւ կանոնաւոր ձեւով գործածել բժիշկին կողմէ թերապիւտած հակա-ընկճուածութեան դեղերը: Հոգեբուժական դարձանումը խիստ կարեւոր է: Այս բոլորէն ետք, հարկ եղած պարագային, կը դիմուի էլեկտրահարութեան-էլեկտրացնցումային դարմանութի (electroconvulsive therapy), որ կը կատարուի շաբաթը 2-3 անգամ, 4-5 շաբաթներու ընթացքին:

ԲԺԻԾԿ ԿԱՐՊԻՍ ՀԱՐՊՈՅԵԱՆ

Linda KHARABOYAN, LL.B, D.D.N Notaire et conseillère juridique Testament Mandat Procuration Financement Immobilier Attestations <i>Consultation personnalisée à domicile</i> Տնկերու պցելութիւն ըստ փափաքի 1430, boulevard Saint-Martin O., Laval (Québec) H7S 1M9 T. 514.883.3498 F. 450.328.1258 E. linda@chezenotaire.ca	VIZUALIS optométriste DR SHANT DONABEDIAN Centre d'Achat Fairview - Fairview Mall Pointe Claire 514 695 2555 - VIZUALIS.CA	PHOTO Cristal (514) 744 4313 Mariage - Portrait - Graduation Restauration - Commercial - Passeport Publicité - Lamination - Encadrement Video - Reproduction 647 Boul. Decarie VSL Montreal QC H4L 3L3 photocrystal@hotmail.com www.photocrystal.com
Assura Bien inc. Cabinet en assurance de dommages et de services financiers Ապահովագրական գրասենեակ KRIKOR ABRAKIAN VAHAN MATOSSIAN 970 Montée de Liesse, suite 306, Saint-Laurent, Qc, H4T 1W7 T: 514.903.3999	RITA BAGHDASSARIAN Conseillère en Sécurité Financière Revenu Garantie Viager COMPTE D'ÉPARGNE LIBRE D'IMPÔT (CELI) • CRÉATION D'HÉRITAGE • REER, FERR, RENTE RETRAITE • PLAN D'ÉDUCATION-REÉ • ASSURANCE-VIE & HYPOTHÉCAIRE • ASSURANCE SALAIRE & COLLECTIVE • ASSURANCE DE PARTENARIAT 3820, boul. Lévesque Ouest, Bureau 101, Laval Qc. H7V 1E8 Tél.: (450) 973-2822 • (514) 884-1117 • Fax: (450) 973-2262 ritabagh@yahoo.com	TAXI MIRABEL 450-430-2650 Taxi Mirabel Հայկական հաստատութիւնը կարիքը ունի 20 հայ թաքսի վարորդի Միքայէլ շրջակին մէջ: Հաճեցեք հեռաձայնել Արային (514) 979-1317 թիւին: Taxi Mirabel needs Mirabel area taxi drivers with pocket number, besoin de chauffeur de taxi. Call/Appelez: (514) 979 1317
RE/MAX RE/MAX 3000 inc. Agence immobilière Elie Berberian Courtier immobilier / Real Estate Broker C 514.519.3543 B 514.333.3000	ONGLES CAROLE HAMPARTSOUMIAN POSE D'ONGLES RÉSINE ET POUDRE MANICURE & PÉDICURE AVEC GEL RECouvreMENT SUR ONGLES NATURELS Առողջ եղունգներու խնամքի համար հեռաձայնել՝ 514 941-0014 LAVAL	KRIKOR MAROUNIAN RLU Independent Financial Security Broker Life Insurance • Disability & Critical Illness Insurance Group Insurance • Pension Plans Travel/Visitor Medical Insurance 11820 General Giraud Montreal, QC H4J 2H6 Res: (514) 332-7021 Fax: (514) 332-7376 Cell: (514) 927-2666 krikormar@gmail.com
FIVE STAR ELECTRIQUE CINQ ÉTOILES SPECIALIST IN DECORATIVE GARDEN LIGHTING RESIDENTIAL-COMMERCIAL BEDROS NALPATIAN 442, LA RIVIÈRE, LAVAL, QC. TEL: 514 - 497- 5155 FAX: 450 - 689- 3997 E-MAIL: ELECTRIC.FIVESTAR@GMAIL.COM	CENTUM™ Mortgage programs for new comers to Canada New purchases Refinancing Second mortgages Self employed Low credit score Access to top lenders including private lenders SOSIE DERNERSESSIAN MORTGAGE AGENT LICENCE #M12001830 716 Gordon Baker Road, Unit 204A, Toronto Ontario M2H 3B4 416.662.6650 cell centum.ca/sosie_dernersesian	ALINE BEKEREJIAN NOTAIRE - NOTARY 180, rue Fleury ouest Montréal, Qc, H3L1T5 T 514.382.7222 F 514.381.1818 aline.b@notarius.net www.abnotaires.com Նոտար եւ իրաւաբանական խորհրդատու՝ Ալին Դեքերեճեան

ԳՊԱԴՈՒԱԾ ԹՈՒԱԿԱՆ

ՀՕՄԻ ԳԱՆԱՏԱՑԻ ՇՐՋԱՆԻ 23-ՐԴ ՊԱՏԳԱՄԱՆՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ
30 Յունիս, 1-2 Յուլիս 2017
Մոնթրեալի Հայ կեդրոնէն մերս

ՀՄԸՄ Լաւալ

Մարգական եւ Սկաուտական արձանագրութիւններ
ամէն երեկոյեան ժամը 7-8
հեռաձայնել 514 979 6272
անձամբ մերկայանալ Լաւալի Փառատօնին
մաեւ Hmenetmen Laval Դիմատետրի (Facebook) էջով

երկուշաբթի 10 Յուլիս 2017
Հաւաքոյթ Լաւալի Պարոնեան սրահէն մերս
ՀՄԸՄ Լաւալի գործունէութեան եւ 100 ամեակի առթիւ
Օգոստոս 26-27 Դաշտահանդէս

ԹՈՐՈՆԹՕ

Շաբաթ 28 Հոկտեմբեր 2017
Թորոնթոյի Հայ Օգնութեան Միութեան «Ռուբինա» մասնաճիւղ
ՏՈՂՄԻԿ ՕՐ - 24-րդ - Զօնուած՝
Նախիջեւան մահանգին եւ 5 գաւառներուն՝
Գողթան, Երնջակ, Հահուկ, Նախիջեւան եւ Շարուր

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ-ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Այսու կու գանք մեր խորին շնորհակալութիւնները յայտնելու Արժ. Տէր Գառնիկ Աւագ Բիւր.Գոյունեանին, Արժ. Տէր Հրայր Աւագ Բիւր. Նիկոլեանին, ՀՅԴ «Միեւրոն Փափագեան» կոմիտէին, Համագգայինի Կեդրոնական վարչութեան, Համագգայինի Շրջանային վարչութեան եւ Մոնթրեալի «Սանահին» մասնաճիւղի վարչութեան, ՀՕՄԻ Գաւատայի Շրջանային վարչութեան, ՀՕՄԻ Մոնթրեալի «Սօսէ» մասնաճիւղի վարչութեան եւ Տարեցեները այցելող յանձնախումբին, Հայ կեդրոնի Տարեցեներու միութեան, Հայ կեդրոնի Պրիմի խումբին, եւ բոլոր անոնց որոնք անձամբ, նուիրատուութեամբ, բացիկով, ե-մամակով կամ հեռաձայնով եւ այլ միջոցներով բաժնեկից եղան մեր սուգին, մեր սիրելի ամուսնոյն, հօր, մեծ հօր, եղբօր եւ հարազատին ողբ՝ **ՍԱՐԳԻՍ ԶՈՒՐԻԿԵԱՆԻ** մահուան տխուր առիթով:

Ողբացեալին մահուան Բառասունքին առթիւ հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 2 Յուլիս 2017-ին, Ա. Յակոբ Առաջ. Մայր եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ա. Պատարագի: Սգակիրներ՝ Տիկ. Սիրվարդ Զուրիկեան, Անի Զուրիկեան, տէր եւ տիկ. Նորայր եւ Լիլիան Զուրիկեան, զւկ. Արփի եւ Սեւան, տիկ. Քարէն Զուրիկեան եւ դստերք Սառա եւ Կապրիանա, տիկ. Մակի Օլթանեան եւ հարազատներ:



Վրիպակ - Հշդում

«Հորիզոն» շաբաթաթերի 12 Յունիս 2017 թիւի, էջ 6 «Արամ եւ Պերմուհի Մարգարեան» մանկամտօրի տարեվերջի հանդէսի թղթակցուցեան մէջ:
1.- Մանկամտօրը դոները բացաւ 15 Հոկտեմբեր 2007-ին:
2.- Տիկին Մազլումեան իր հերթին պարգեւատրեց չորս դաստիարակներ, որոնցմէ վրիպած էր Տիկին Սիլվա Պափաեանի անունը :



Այցելեցէք Ա. Յակոբ Առաջնորդանիստ Մայր եկեղեցւոյ կայքէջը՝
www.sourphagop.net

ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՌՈՇԱԴՐՈՒԹԵԱՆ

«ՀՈՐԻԶՈՆ» որեւէ ձեւով եւ որեւէ ժամանակ պատասխանատու չէ լոյս տեսած ծանուցումներու բովանդակութեան:
«ՀՈՐԻԶՈՆ» իրաւունք ունի ընդունելու կամ մերժելու որեւէ ծանուցում կամ յայտարարութիւն:
ԾԱՆՈՒՅՈՒՄՆԵՐԸ Կ'ընդունինք միայն գրաւոր, որոնք խմբագրութեան պէտք է յղուին թերթի լոյս ընծայման ժամկէտէն առնուազն 7 օր առաջ:

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ

«Հորիզոն»ի յղուած թղթակցութիւններն ու յօդուածները պէտք է գրուած ըլլան ընթերցելի ձեռագիրով, նախընտրաբար մեքենագրուած կամ ե-մամակի մեր հասցէին յղուած: Անստորագիր եւ առանց հասցէի գրութիւնները մկատի չեն առնուիր: Խմբագրութեան յանձնուած միւթերը հրապարակուին կամ ոչ, չեն վերադարձուիր:
Հրատարակուած յօդուածներու մէջ տեղ գտած կարծիքները անպայմանօրէն չեն մերկայացնել խմբագրութեան տեսակէտը:
Ցապաղած թղթակցութիւնները չեն հրատարակուիր:
Բոլոր թղթակցութիւնները ենթակալ են խմբագրման եւ վերամշակման:
Ստացուած յօդուածներն ու թղթակցութիւնները հրատարակելու կամ չհրատարակելու որոշումը վերապահուած է խմբագրութեան:

SUDOKU - ՍՈՒՏՈՔՈՒ

Աստիճանաւորում՝
միջին

				3		5	1
	3	6	8	9			4
	6			8			
3		9			2	6	7
1						2	
	1			7		3	
2		7			3	4	
	8		2	1			

horiZon

H O R I Z O N
Hebdomadaire arménien
Armenian Weekly
Publié par / Published by
Les Publications Arméniennes
(1991)
3401, Olivar-Asselin
Montréal, Québec
Canada H4J 1L5

Abonnement annuel /
Yearly subscription
Canada
2^e classe - 2nd class: \$80
plus applicable taxes
1^{re} classe - 1st class: \$95
États-Unis / USA
1^{re} classe - 1st class: \$95 US
Ailleurs / Elsewhere
1^{re} classe - 1st class: \$125 US

Administration / Publicité
Sylvia Ehramdjian-Bachekjian
(General Manager)
Tél.: (514) 332-3757
Télécopieur/Fax (514) 332-4870
E-Mail: sylvia@horizonweekly.ca
Courrier de deuxième classe
/No. 40065294 / Second class mail
Dépôt légal: bibliothèques nationales
du Québec et du Canada - ISSN 0708580X

Վարիչ Խմբագիր՝
Վահագն Գարագաշեան
Վարչական պատասխանատու՝
Սիլվա Պաշեգճեան
Քարտուղար՝ Մարինա
Տէր Խաչատուրեան
Աագ խմբագիր՝
Վրէժ-Արմէն Արթինեան
Անգլերէն/Յրանսերէն՝ Վիգէն Արքա-
համեան, Թինա Սիլահեան
Չեաւորում՝ Նէմսի Կիրակոսեան
Սրբագրիչ՝ Սոնիա Աճէմեան
Սոնա Թիթիզեան-Կէտիկեան

Թորոնթոյի
Ներկայացուցիչներ՝

Գրիգոր Հոբոյեան, (416) 494-1921
Ժազ Վարպետեան, (416) 722-9225

Լուսանկարիչներ՝ Արմէն Ալեմեան, Մայք Թաշճեան, Իշխան Ղազարեան, Գալուստ Պապեան, Վազգէն Տէկիրմէնթաշ,

Financé par le
gouvernement
du Canada

Funded by the
Government
of Canada

Canada

ԱՍՏՂԱԳՈՒԾԱԿ



ԽՈՅ (21 Մարտեւ 20 Ապրիլ) - Փորձէ անելի համարձակ ըլլալ։ Աւելորդ մանրամասնութիւններով մի՛ գբաղիր, կարիքը չկայ այդքան դիւրագգաց ըլլալու։ Երկմտութիւնը անդին նետէ եւ յառաջացիր յարաբերութեանդ մէջ։ Ժամանակ տրամադրէ սիրային կեանքիդ։

ՅՈՒԼ (21 Ապրիլէն 21 Մայիս) - Ամպոտ Է սիրային կեանքդ այս շրջանին, բախտաբեր չէ այս ժամանակաշրջանը եւ ջղային կը դարձնէ քեզ։ Վերջերս հին իրավիճակներ կը պրպտես եւ անմիաստ տեղը կ’անհանգստանաս։ Երբեմն անցեալը պէտք Է փոշիի տակ ձգել։

ԵՐԿՈՒՐՈՐԵԱԿ (22 Մայիսեւ 21 Յունիս) - Այս շրջանը շատ նպաստաւոր Է մօտեցում ցուցաբերելու եւ համերաշխութեամբ գոյակցելու կողակիցիդ հետ։ Հակառակ ունեցած անխմաստ տատամսումներուդ պիտի յայտնուի, թէ սիրեցեալդ անհամբեր կը սպասէ, որ դուն ըլլաս նախաքայլը առնողը։

ԽԵՅԳԵՏԻՆ (22 Յունիսեւ 23 Յուլիս) - Շուարած ես այս շաբաթ, հարցումներու տարափ մը կը տողանցէ մտքիդ մէջ եւ կը չարչրկէ քեզ։ Սիրեցեալիդ հետ յաճախ բախումներ պիտի ունենաս, սակայն մի՛ մտահոգուիր, կեանքի ընկերդ պիտի փորձէ չափազանց հասկացողութիւն ցուցաբերել։

ԱՌԻՒԾ (24 Յուլիսեւ 23 Օգոստոս) - Աշխոյժ ես այս շաբաթ եւ կենսութախ։ Շուրջիններդ վերջապէս պիտի գնահատեն քու գեղեցիկ ներաշխարհդ, բարիութիւնդ եւ իրաշալի բնւորութիւնդ։ Քիչ մը հոգ տանելու ես արտաքին գեղեցկութեանդ, արտաքինը ներքինը թափանցող հայելին Է։

ԿՈՅՍ (24 Օգոստոսեւ 23 Սեպտեմբեր) - Ջերմ հանդիպում մը պիտի ունենաս, որ հին, խամրած եւ մոռցուած զգացում մը պիտի արթնցնէ մէջդ։ Այս հանդիպումը պիտի փոխէ ամբողջ կեանքի ուղիդ։ Շուրջիններուդ հետաքրքրութեան առարկայ պիտի դառնաս։

ԿՇԻՈԶ (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր) - Ռոմանօիք շաբաթ մը պիտի ունենաս։ Հետեւաբար փորձէ բոլոր խոչընդոտները վերացնել եւ սիրեցեալիդ հետ հաճելի պահեր ապրիլ՝ հեռու առօրեայի տաղտուկէն եւ իրարանցումէն։ Ճակատագրական որոշումներու շաբաթ մը պիտի ըլլայ։

ԿԱՐԻԾ (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր) - Դուն քաջատեղեակ ես, որ յամառութիւնը միշտ կը վնասէ սիրային յարաբերութեանդ։ Կը սիրես միշտ քու կարծիքդ պարտադրել եւ իշխող հանդիսանալ։ Այս մէկը պատճառ կը դառնայ ձեր միջեւ անհամաձայնութիւններու, հետեւաբար անելի հասկացողութիւն ցուցաբերէ։

ԱՂԵՂՆԱԻՐ (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր) - Սիրտդ կը թռվռայ նոր եւ զօրաւոր զգացմունքներով, կարծես կ’ուզես ամբողջ աշխարհը ընդգրկել։ Շաբաթը շատ նպաստաւոր պայմաններ պիտի ստեղծէ քեզի համար՝ ըմբռնիւնելու կեանքն ու բնութեան գեղեցկութիւնները։

ԱՅԾԵՂԶԻՐ (22 Դեկտեմբերէն 20 Յունուար) - Շատերու կը հանդիպիս, նոր անձնաւորութիւններու, որոնք մէջդ նոր զգացումներ կ’արթնցնեն։ Եթէ կապուած չես եւ սիրոյ ծարաւը կը զգաս, այս շաբաթ անպայման պիտի հանդիպիս երկրորդ կէսիդ եւ հաւանաբար շուտով լուրջ քայլ մը առնելու որոշում առնես։

ԾՈՎԱՆՈՅԾ (21 Յունուարէն 19 Փետրուար) - Դժուարութիւն ունիս սիրեցեալիդ հետ հասկցուելու, կը մեղադրես զինք անտարբերութեան եւ սառնասրտութեան, նոյնիսկ անտեսումի համար։ Բուռն վեճեր կը ծագին, բայց այս բոլորին հիմնական դրդապատճառը քու անկայուն վիճակդ Է։

ՁՈՒԿ (20 Փետրուարէն 20 Մարտ) - Բացառիկ շաբաթ մը կը սպասէ քեզ, բոլոր ասպարէզներուն մէջ յաջողութիւն պիտի գտնես, յատկապէս՝ սիրային յարաբերութեան հարցով։ Հրաշալի պահեր պիտի ապրիս սիրեցեալիդ հետ, կը թարմանան բոլոր զգացական ապրումներդ։

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ ՎԱՐԺԱՐԱՆԻ 2017 ՏԱՐԵՇԵՐՁԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՃԱՆԿԵՐՈՑԹԻ ՆՈՒՐԱ–ՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ
Ապրաքեան Լորի եւ Թալին 1000
Աֆարեան Մանուէլ եւ Քրիստին 200
Աղպապեան Սեւակ 25
Ահարոնեան Տիրան եւ Ալին 60
Այնթէպեան Ժոնի եւ Հիւր մը 200
Ալէմեան Արմէն եւ Քրիստին 75
Ալբին Արի եւ Անի 300
Անտոնեան Հուրի եւ Անի 400
Անթապի Արին 30
Աբանեան Ռաֆֆի եւ Անիթա 250
Աբանեան Սեան եւ Ալիք 200
Աբրահամեան Կարպիս եւ Լենա 200
Տօքթ.Արաքելեան Ժան եւ Մարի Թէ–րէզ 250
Աքջարեան Ռուբէն եւ Սուգան 200
Ասլանեան Բիբի եւ Gaspard Frederica 500
Attil Dina 50
Պապիկեան Արէն 50
Պապիկեան Սեւակ 50
Պապիկեան Թորոս եւ Անի 400
Անտիքեան Պաղտասար 150
Պարթեւեան Պերճ եւ Անի 100
Պարթէքեան Արա 200
Տօքթ.Պատմաճեան Ժիրայր եւ Յասմիկ 1000
Պայկրն Տիան 100
Պէշեան Անտրէ եւ Նաթալի 1000
Պէնկեան Լեւոն 100
Պէնօհանեան Արամ եւ Մարի 500
Տօքթ.Պէնօհանեան Անդրանիկ եւ Անի 1000
Պէզճեան Նորայր եւ Վարդուկ 200
Պողոսեան Կարօ եւ Միշէլ 200
Պուկարեան Յակօր եւ Աննա 200
Պօլաճեան Փանոս 25
Տարազճեան Սարգիս 50
Տէմիրճեան Արամ եւ Լիզա 50
Տէմիրճեան Ռաշէլ 200
Տէմիրճեան Թամար 50
Տիմիթեան Թորոս եւ Լորի 250
ձէրէճեան Համփէթ եւ Թալին 400
ձուրեան Ուսմակ եւ Սոնիկ 260
ձուրեան Ռուբէն 25
Տօլմաճեան Զարհճ եւ Արփի 300
Տօնապետեան Ռաֆֆի եւ Սեղա 250
Տօնապետեան Սեան 25
Տօնապետեան Շանթ եւ Ալինա 500
Տանդեան Թալին 25
Էլակոյ Արամ եւ Անի 120
Էյոյեան Նուշիկ 100
Fontaine Josee 200
Ֆրունճեան Թոմաս 150
Կազարեան Արպի եւ Թալին 200
Քէշօշէրեան Սիլվա 100
Կուտեան Յակօր եւ Ծովիկ 500
Կուտեան Ռազմիկ 250
Հատիտեան Ազգանուշ 50
Հատիտեան Ռաֆֆի եւ Ալին 120
Հանճեան Զէփիր 100
Հայրապետեան Փոյ եւ Մարինա 150
Հանաչեան Մատլէն 50
Հիմիտեան Վիզէն եւ Գարոլին 200
Հիւաննէսեան Մարի 100
Յովսէփեան Լորի 100
Յովսէփեան Վիզէն 500
Իսկէնեան Վարդան եւ Սեղա 100
Իսաճանեան Վանուհի 150
Իսթանպուլեան Սեւան եւ Նաթալի 500
Ճապրայեան Թալիա 25
Փալանճեան Լուսին 75
Փէրաճեան Աշոտ 200
Գէշէճեան Հրայր եւ Սօսիա 200
Քէտսէյեան Անի 500
Քէտսէյեան Լենա 150
Քէտսէյեան Մանօ եւ Թալին 1000
Քէտսէյեան Վիզէն եւ Անի 200
Ուաչատուրեան Մարի 50
Թորիկեան Գառնիկ եւ Ռիթա 300
Ոռօղեան Հրանդ եւ Սայրի 200
Ոռօղեան Վահան եւ Գարոլին 500
Որիկեան Սայրի 50
Գոլյումճեան Ռաֆֆի եւ Սէսիլ 500
Գոլյումճեան Մարգիս 250
Գոլյունեան Տէր Գառնիկ եւ Երեցիկն 200
Քիւրտօղլանեան Յարութիւն եւ Թալին 200

Քիւրքճեան Մարինա 200
Լատայեան Սայրի 100
Լախոյեան Յակօր եւ Սայրի 200
Մալխասեան Ատոմ եւ Սեղա 1000
Մալխասեան Նարեկ եւ Մարալ 300
Մանճիկեան Յակօր եւ Տիրուկ 200
Մանուկեան Արամ եւ Յասմիկ 250
Մանուկեան Շանթալ 100
Մանուկեան Քրիստափոր 300
Մանուկեան Յարութիւն եւ Հէրմին 300
Մարգարեան Լիլի 200
Maroushka Viktor 50
Մաղլումեան Լիզա 100
Մկրտիչեան Ժան եւ Արտեմիա 300
Միլքոնեան Արէն 25
Մէշէֆէճեան Կրէյա 40
Նաճաբեան Յովհաննէս 50
Նալպանտեան Հովիկ եւ Էյօ 300
Նալպանտեան Միքայէլ 25
Նազարեան Մարալ 100
Neven, Ines 25
Ներսեսեան Սիրուն 50
Savu Octavian 50
Օհանեան Գէորգ եւ Արաքսի 250
Օլթիսսի Արթիւ եւ Թամար 2500
Օլթիսսի Մակի 100
Օրջանեան Սօսիա 200
Ունանեան Մարտիկ եւ Աննա 300
Փանոսեան Վաշէ եւ Արփի 200
Փափախեան Սօսիա 100
Փափախեան Վարդան եւ Նայիրի 250
Փիլիպոսեան Ռաֆֆի եւ Ծովինար 500
Սարգիսեան Սոնա 50
Սարգիսեան Վիզէն եւ Անի 250
Սերենիկւեան Նորայր եւ Ծովիկ 250
Սրբազան Սուրէն Գաթարոյեան 250
Ջարփաճեան ճոնաթան 25
Ջէրքէչեան Նարեկ 40
Դեքճակեան Մարալ 100
Դեքճակեան Արշօ 100
Թորիկեան Արի 25
Թորոսեան Հովիկ 75
Թիւֆէկճի Անթուան եւ Արշիկ 300
Եագուպեան Լիզա 150
Եաղէճեան Արմիկ 100
Եաղէճեան Լեւոն 100
Եաղէճեան Սարգ եւ Արադ 250
Եափուճեան Հրայր 200
Զաքարեան Ժիրայր եւ Հուրի 300
Զատոյեան Ժորժ 200
Զաքարեան Ճօի եւ Արաքս 350
Զաքարեան Վանի 25
Զէյթունայեան Հովիկ եւ Նանոր 50
ձէրճեան Յարութ եւ Մարալ 300
Դաւիթեան Լորա 100
Norman Liza 100
Դաւիթեան Յարութ 270
Գալուսեան Վարուժան 200
Մկրտիչեան Ջարհճ 200
Կիւլպէնկեան Սիլվի 200
Հարպոյեան Լորի 400
Աղալա Գրիս 200
Գոլյումճեան Օվաննա 100
Պաղտատ Արա 40
Պաղտատեան Ռիթիա 250
Տօքթ. Հարպոյեան Կարպիս 400
Տէմիրճեան Արամ 50
Պազպալեան Մալիկ 100
Միքայէլեան Սարին 200
Գալպճեան Մարալ 100
Ուրֆայեան Էլի 200
Կարապետեան Լիսի 100
Վրէժ Արմէն Արթինեան 1000
Վարդէկէ Շամսեան 300
Զաւէն Ինճէճիքեան 100
Պէրպէրեան Պերճ 200
Գրիգոր Տէր Ղազարեան 1000

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՑ
Իւղազին
Տ. եւ Տ. Արէշ-Արմէն Արթինեան 50
Բաբգէն, Զարուհի Իսաջանեաններու Հոգւոց
Վանուհի Իսաջանեան 50
Տիգրան Տէմիրճեանի, Նանւ Սիլվիա Յարթումեանի Հոգւոց եւ Լէյլէքեանի եւ Տէմիրճեան գերդաստանաց ննջեցեւոց
Էվլին Տէմիրճեան 100
Արա Օ. Աւետիսեանի Ա. տարելիցին
Marielle Deguire 100
Անթոն Շայնի Հոգւոյն
Սիրվարդ Շայն 100
Սազօ Մանուկեանի Կ-4-րդ տարելիցին առթիւ
Եւա Աղալա 50
Միհրան Փնճոյեանի 9–որդ տարելիցին եւ Փնճոյեան, Պետրոսեան եւ Պօղոսեան գերդաստանաց ննջեցեւոց
Յակօր, Շաքէ եւ Մարտիկ Պօղոս–

եաններ 20

Թովմաս, Գրիգոր, Եւնիկ Պէրպէր–եաններու Նանւ Իլիաս, Նաժահ, Մաւր Սաատեներու եւ Էլի Շէտիտիի Հոգւոց
Յակօր Նարեկեան 30
Լօրիս Հալաճեանի Ա. տարելիցին
Յովիկ, Այտա Նիկողոսեան, զւկը. 100
Վազգէն Ուաչատուրեանի 8–րդ տա–րելիցին
Տ. եւ Տ. Դաւիթ Ուաչատուրեան, զւկը. 50

Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՑ, ԹՈՐՈՆԹՅՕ

Ժազ Տէրակորեան 50
Ժան եւ Հուրի Մալճեան 50
Արմէն եւ Մարալ Գարբիէլեան 20
Եփրեմ եւ Սօսի Ուաչերեան 150
Ճորճ եւ Մէրի Թոնամեան 60
Նորիկ Տէր Օհանեան 250
Մալքըլ Բէնիամին 100
Նուրէլ եւ Լենա Պէլլէրեան 20
Միլքոն եւ Սօսի Քարկոցեան 20

Գրիգոր Հոթոյեանի զբաժ "Հայա–շունչ Պատմուածքներ"
զրքին Հրատարակութեան առիթով
Կարէն Տէմիրճեան 20

Աստղիկ Ջալեան–Ժամկոչեանի Ա. տարելիցին
Ճորճ եւ Սօսի Տէր Գասպար 100
Շանթ Տէր Գասպար 100
Արմէն եւ Սօսի Տէր Գասպար 100
Տէր եւ Տիկ. Մովսէս Ժամկոչեան 40
Տէմիրճի Երիւ–ի եւ Համայն Տէմիրճեան, Գասպարեան, Պօղոսեան, Անթուե–եան եւ Էջօղլանեան գերդաստա–նի ննջեցեալներու Հոգիներուն
Տիկ. Նուրիցա Տէմիրճի 50
Հոգեղոյս Տէր Կորին Արք. Պապեանի 2–րդ տարելիցին եւ Գոլյումճեան Յասմիկի 40–քին
Գալուստ եւ Յասմիկ Պապեան100
Գոլյումճեան Յասմիկի 40–քին
Սեղա Գոլյումճեան 100
Կարօ եւ Ազնիւ Եղոյեան 50
Եղեայեան ընտանիք 50
Վիզէն եւ Գարօլ Ուանամիրեան 30
Յակօր եւ Ռիթա Մրապեան 20
Անահիտ Մարկոսեան 20
Քօփէյեան Մկրտիչի 40–քին
Համազասպ եւ Ծողիկ Սարգիսեան 100
Յակօր եւ Ժլլիլէթ ճանապաղեան 50
Պետրոսեան Վերժինի մահուան 40–քին
Աղուան եւ Սօսի Պետրոսեան 100
Զաքարեան Քոյրեր 50
Վրէժ եւ Սաթնիկ Զաքարեան 20
Կարձակ եւ Արմիկ Զաքարեան 40
Կարօ եւ Եղիսաբէթ Զաքարեան 30
Վահան եւ Վարդուկ Աղայեան 40
Նասսրճեան Վարդանի 40–քին, Հասրճեան Աւետիսի, Յովհաննէսի, Լեւոնի եւ Մարի–ի Հոգիներուն
Տօքթ. Արա Տէմիրճեան եւ ընտանիք 50

Տօլապճեան Լեւոնի 2–րդ տարելիցին
Նորա եւ Ժազի Պէքարեան 20
Պատիկեան Ալիսի 2–րդ տարելիցին, Պատիկեան Բիւզանդի եւ Նուպարի Հոգիներուն
Զաւան եւ Սօսի Պատիկեան 50
Գոլանճեան Յարութիւնի եւ Համայն Գոլանճեան գերդաստանի ննջեցեալներու Հոգի–ներուն
Հրաշ եւ Ազօ Գոլանճեան 50
Պաղտասարեան Ֆելիքսի, Գառնիկի, Պէնիթա–ի, Յովհաննէսեան Վարդ–կէսի եւ Ռէյ–ի Հոգիներուն
Էտլի եւ Տէղիրէ Յովհաննէսեան 40
Համայն Կիօրքճեան եւ Թիթիզեան գերդաստանի ննջեցեւոց
Աղբեր եւ Դշխուն Թիթիզեան 50
Պարսումեան Պարսումի եւ Ճորճի Հոգիներուն
Ներսէս Պարսումեան 20
Աղազարեան Սեղա–ի 40–քին
Տալիթա Կիւլէսերեան 10
Տէր եւ Տիկ. Արմէն Կիլիսէրեան 10
Ուաչատուրեան գերդաստանի ննջե–ցալներու Հոգիներուն
Յարութ Սիփան եւ ընտանիք 20
Եմէնճեան Ժիրայրի Հոգւոյն
Թաթուլ Եմէնճեան եւ ընտանիք 50
Արապեան Աւետիսի Հոգւոյն
Տիգրան Ուաչերեան եւ ընտանիք 50
Հախնազարեան Էտլինի Ա. տարելի–ցին
Էտուարտ եւ Իզապէլ Հախնազար–

եան 100
Թոնի եւ Մայտա Ներսէսեան 40
Կարապետեան Զաւէնի Ա. տարելի–ցին
Ռուբէն Կարապետեան եւ ընտանիք 100
Կարօ Կարպետեան եւ ընտանիք 100
Տէր եւ Տիկ. Աւազ Կարապետեան 100
Աւետիս եւ Արտեմիա Մուշեան 50
Տէր եւ Տիկ. Օհաննէս Էաբէնտէրեան 25
Յարութ Սվազլեան եւ ընտանիք 40
Գրիգոր Մերճանեան եւ ընտանիք 20
Նազարէթ Մերճանեան եւ ընտանիք 20
Վարդուհի Ֆիսիսի եւ ընտանիք 50
Տէր Սահակեան Կարապետի եւ Հա–մայն Տէր Սահակեան եւ Աշիբեան գեր–դաստանի ննջեցեւոց
Յակօր եւ Մարիա Թորոյեան 100
Հրաշ եւ Ազօ Գոլանճեան 50
Մէլէշեան Սահակի եւ Լուսինի, Բարսեղեան Մկրտիչի եւ Մարիի Հո–գիներուն
Յակօր եւ Սայրի Քէլէշեան 25
Բօլատեան Ազնիւի Ա. տարելիցին
Տիար Նուպար Բօլատեան 50
ՇէՀիրեան ընտանիք 50
Պոյաճեան Ժորժէթի 40–քին
Պերճ եւ Լենա Ղազարեան 50
Ավազեան Ներսէսի, Անիցա–ի եւ Սեղա–ի Հոգիներուն
Յակօր եւ Յասմիկ Ավազեան 20
Եմէնճեան Ժիրայրի Ա. տարելիցին
Տէր եւ Տիկ. Թաթուլ Եմէնճեան 50
Գալուստեան Վարսենիկի Ա. տաբե–լիցին
Արմենակ եւ Վիզի Գալուստեան 40
Նազար եւ Նինա Վաթիպեան 50

Առաքել եւ Նորա Ուաչիկեան 50
Արմէն եւ Ծողիկ Զարացեան 40
Տէրտէրեան Համբարձուճի եւ Սա–թնիկի եւ Համայն Տէրտէրեան, Ճալատեան եւ Սարաֆեան գերդաստանի ննջե–ցալներուն Հոգիներուն
Սանփան եւ Հուրի Նաճարեան 100
Ասպետ եւ Սօսի Աթիքեան 100
Տիգրան եւ Թինա Տէրտէրեան 40
Պետրոսեան Լուսինի Հոգւոյն
Ճորճ Պետրոսեան եւ ընտանիք 20
Վանայեան Եսայի Հոգւոյն
Տէր եւ Տիկ. Վանիկ Վանայեան 20
Թորոսեան Օհաննէսի 10–րդ տաբե–լիցին
Տիկ. Մարի Թորոսեան եւ զաւա–կունք 50
Աղամանուկեան Ճոնի Հոգւոյն
Դանիէլ եւ Սիզի Մարկորեան 100
Դաւիթեան Դաւիթի մահուան 40–քին
Տէր եւ Տիկ. Վարուժան Դաւիթեան 50
Ղազպեան Սիրվարդի մահուան 40–քին
Յարութ եւ Մարլէն Ղազպեան 50
Սազօ եւ Լօրէն Ղազպեան 25
Սերոբ եւ Թալին Ակըր 30
Տիար Աւետիք Ջօրաքլեան 40
Գարժար Ժանէթի մահուան առի–թով

Տիկ. Արփի Աճէմեան 50
Սամ եւ Սեւան Մանուկեան 50
ՀՕՄԻ ԳԱՆԱՏԱՅԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ
Ճորճ Արմոյեան 200
Աննա Պուկարեան 100
Մարօ Շայճեան 50
Անի Գրայեան 50
ՄՕՐ ԵՒ ՄԱՆԱՆ ՄՆԻԿԱՍԱՆ
Թողիկ Գրիգորեան 200
ԱՐՁԱՍԻ ՓՈՆՏԻՆ
Լեւոն եւ Սօսէ Կարապետեան 1000

ՀՕՄԻ ՍՕՍԷ ՄԱՆԱՃԱԻՂԻՆ
Թանկա Քարպիան 40
Պողոս եւ Մարի Քերդէշեան 25
ՏԱՔ ՃԱՇԻ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԵԱՆ
Մարտիրոս Թուրթեան 25
ՏԱՐԵՑԵՆԵՐ ԱՅՑԵԼՈՂ ՅԱՆՁՆԱ–ՈՒՈՒՄԲԻ 30 ԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻ
Վկրտիչ եւ Մարի Մկրտիչեան 200
ՀՕՄԻ ՕՐՈՒՆԱ ԱՌԹԻ
Վանուհի Տ Իսաճանեան 100

ՀԱՅ ԿԵԴՐՈՆԻ ՏԱՐԵՑԵՆԵՐՈՒ ՄՐՈՒԹԵԱՆ
Մայրերու Օրուայ Առթիւ
Շաքէ Մտեփանեան 100





NISSAN FACTORY APPROVED EVENT

GRUPE NISSAN
GABRIEL



Sentra SR Turbo shown*

SENTRA SV WITH AUTOMATIC
TRANSMISSION
Lease from **\$214** / month with \$995 down.

THAT'S LIKE PAYING
49\$^{##}
/ WEEK

FOR
39
MONTHS

✓ FACTORY APPROVED FEATURES

20,000 km annual allowance
\$0.10/km for excess kilometres



NISSAN
GABRIEL
JEAN-TALON

3500, rue Jean-Talon O, Montréal, QC H3R 2E8
514 509-7777 | nissangabrieljeantalon.com

◀ OPEN SATURDAYS ▶

NISSAN
GABRIEL
ANJOU

7010, boul. Henri-Bourassa E, Anjou, QC H1E 7K7
514 324-7777 | nissangabrielanjou.com

◀ OPEN SATURDAYS ▶

Offers valid from June 1st to 30th, 2017. The lease offers are based on a maximum of 20,000 km / year (total allowance of 65,000 km for 39 months) with excess charged at \$0.10 / km. The first monthly payment is due at lease inception. RDPRM registration fees and lien registering agent's fees (up to \$77 total) are extra and due at time of delivery. The lease offer on the following shown 2017 models : Sentra SR Turbo MT / Micra SR AT / Versa Note SR is for a 39 month term, which equals 39 monthly payments of \$274 / \$265 / \$264 (with \$0 down payment) when leased through NCF. License, registration, insurance, specific duty on new tires (\$15) and applicable taxes are extra and due at inception. Payments cannot be made on a weekly basis and are shown for informational purposes only. 1. Parking aid / convenience feature. Cannot completely eliminate blind spots. May not detect every object and does not warn of moving objects. Always check surroundings and turn to look behind you before moving vehicle. 2. VDC, which should remain on when driving except when freeing the vehicle from mud or snow, cannot prevent accidents due to abrupt steering, carelessness, or dangerous driving techniques. 3. Availability of specific features is dependent upon the phone's Bluetooth® support. Please refer to your phone owner's manual for details. Bluetooth® word mark and logos are owned by Bluetooth SIG, Inc., and any use of such marks by Nissan is under licence. 4. Availability of specific features is dependent upon the phone's Bluetooth® support. Please refer to your phone Owner's Manual for details. Bluetooth® word mark and logos are owned by Bluetooth SIG, Inc., and any use of such marks by Nissan is under licence. The offers are available on approved credit through NCF for a limited time. Models shown are for illustration purposes only. Offers subject to change, continuation or cancellation without notice. Visit www.choosenissan.ca or see your Nissan Gabriel Jean Talon or Nissan Gabriel Anjou retailer for complete details. Conditions apply. ©2017 Nissan Canada Inc.



BARRY




KAREN



GARO

KAZANDJIAN



EXPERTISE

EXPÉRIENCE

EXCELLENCE

ÉQUIPE KAZANDJIAN .com

CLASSÉS PARMIS LES MEILLEURS COURTIER RE/MAX AU MONDE
RANKED AMONGST THE HIGHEST PERFORMING RE/MAX BROKERS IN THE WORLD

KAZANDJIAN REALTY .com

AGENCE IMMOBILIÈRE RE/MAX 3000 | 9280 L'ACADIE, MONTRÉAL, QC, H4N 3C5